

Hentchak :

Organe Central

DU PARTI

S.-D. HENTCHAKISTE

ՀԵՉԱԿ

Journal Arménien
mensuel

XXV Année

Adresse Télégraphique :

Հեռագրի հասցե բոլոր

երկրների համար

"HENTCHAK" Paris

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ Ա.-Դ. ՀԵՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Եղերական է ներկայ պատմական րօպէն Թիւրքիայի շուրջը: Եղերական է նա Թիւրքիայի Համար, եղերական է նաև այն բոլոր ժողովրդների Համար, որոնց բախտը կապւած է, այս կամ այն ձևի տակ, Թիւրքիայի Հետ:

Թիւրքիան ընկնում է: Եւրօպայի արեօպագը ներկայ ժամին որոշում է օսմանեան պետութեան ճակատագիրը:

Բալկանեան ներկայ պատերազմը յայտնեցաւ Թիւրքական տիրապետութեան վախճանի սկիզբը: Նա Հիմնովին պոկեց վերջինիս գոյութեան արմատները: Եւ այսօր, տակաւին այլ և այլ ձևականութեան դիմակի տակ, Թիւրքիան սկսել է պատառ-պատառ լինել: Արատւում է նրա լծից Մակեդոնիան, ազատւում են Թրակիան և Էպիրը, ազատագրւում է Ալբանիան . . . Այդպէս անհետանում է եւրօպական Թիւրքիան:

Այլ կողմ, աւելի Հեռուն, եւրօպական դիպլոմատիայի մկրատը սկսել է նոյնպէս ձևել կտրելու Համար Փոքր Ասիան: Ազատագրւում է արդէն Լիբանան և ապա առաջանալու վրայ են Սիրիայի և Արաբիայի խնդիրները:

Այս կրիտիկական ժամին, այս սարսափելի, բեղմնաւոր ու յղի ժամին երևան է գալիս նաև Հայկական Խնդիրը, ամենակնճռոտ, զժաւարալուծելի և ամեն ձախտոյ պայմանների երկաթէ օղակում խեղդւած Հայկական Խնդիրը:

Համիդական բռնապետութիւնից և գազանային ջարդերից յետոյ, «սահմանադրական» Թիւրքիան իսկապէս անընդունակ և անկար յայտնեցաւ քաղաքական ազատամիտ բարեփոխութիւնների արմատները ձգելու օսմանեան պետութեան Հոդը: Անկար և անընդունակ: Այո՛, բայց և իր ո՛չ մի գործով և ո՛չ մի օրէնքով տարրական անգամ բարեփոխումների փորձ չարեց նա, չունենալով բարի կամք այդ նպատակի իմաստը և ուղիւթիւնը տալ իր կառավարական ղեկին:

Նա զինուորական «սահմանադրութիւն» էր և Հէնց այդ պատճառով յայտնեցաւ, իր պետութեան ժողովրդային շահերի նկատմամբ, թշաւապէս ամուլ: Երկունքը վիժել էր: Բժիշկների տեղ երևան եկան անասնաբույժեր: Ո՛չ այդ նոյն իսկ. — սպանդանոցում կենդանիներ մօրթողներ: Դարձեալ, ուրեմն, ինչպէս Համիդական ըէփմը: Ապացոյց ու փաստ: Բացէք Թիւրքահայ կեանքի վերջին չորս տարւայ ծալքերը, բացէք եւրօպական Թիւրքիայի օտար ժողովրդների պատմութեան էջերը նոյն այդ ժամանակ. — նոյն նախկին սխտէճը, ապա մասնակի և լայնածաւալ սպանութիւններ Հայերի, մակեդոնացիների, թալաններ և ամեն տեսակ Հալածանքներ: Ապացոյց ու փաստ: Ազանայի վարհուրելի կոտորածը — Հալարաւո՛ր Հայ, դեռ երէկ . . . և նրանց արիւնը տակաւին չէ ցամաքել:

Եթէ Թիւրքիան յիշաւի յեղափոխած լինէր իր նախկին ամօթալի ու բարբարոս ըէփմը, եթէ նա բացած լինէր իր ժողովրդների առաջ սահմանադրութեան ասպարէզը, եթէ նա չը լինէր զուտ զինուորական գերիշխանութեան փոխադրո թիւն աջ ձեռքից ձախ ձեռքը, — այդպիսի Թիւրքիան Հնարաւորութիւն կունենար

ՈՅԻՈՅ ԴԴԿԱ ԵՍԴՅՈՆ

ստեղծել բարենպաստ պայմաններ իր պետութեան ընդարձակ սահմաններում ապրող ազգերի կենցաղավարութեան բարեփոխման համար՝ յեղաշրջւած ու հաստատուած նոր ու հիւթալի հողի վրայ: Եւ նա այդպիսով դրած կը լինէր հիմքն իր երկրի բոլոր ժողովրդների ազատութեան խնդրի լուծման:

Մինչդեռ այսօր . . . Այսօր այդ «նոր» Թիւրքիան, ծանրացած ու ճնշւած իր սխալների ու ոճիրների տակ, ընկնում է: Ոչ միայն այդ: Այսօր օսմանեան պետութիւնն ընկնում է աւելի խոր պատճառով. — իր «սահմանադրութիւնն» ա ն տ ե ս էր առել և ա ն ն կ ա տ թողել Թիւրքիայում ապրող բոլոր օտար և կուլտուրապէս աւելի հասուն ու բարձր ժողովրդներին և իրան հիմք էր ընտրել մի միայն թիւրք ժողովրդի կրօնական ոգին և կուլտուրապէս ստոր գտնւած համալինձակը: Այդ հիմքն ունենալով, սահմանադրութիւնը չէր պատասխանում ա մ բ ո ղ ջ Թիւրքիայի բարեփոխման ու զարգացման պահանջին: Եւ ահա դա եղաւ նրա «սահմանադրութեան» կորստեան և ապա այսօր օսմանեան պետութեան անկման առաջին ու զլխաւոր հիմնապատճառը:

Ահա՛ թէ ինչու Հայկական Խնդիրը, ի թիւս այլոց, Թիւրքիայում, մնաց բաց և չը լուծւած: Եւ ահա՛ թէ ինչու այսօր նա ժայթքում է բուռն ուժգնութեամբ, ինչպէս մի կատաղի լաւա, որ երկար ժամանակ խնդրւած էր մնացել վուկանի խորում, բայց որ երբեք չէր դադարել եռալ աջնոցը:

Հայկական Խնդրի իրրեւ պ ա տ մ ա կ ա ն հ ի մ ք Եւրօպայի առաջ ընդունեցէ՛ք Բերլինի Դաշնագրութեան 61-րդ յօդուածը, ընդունեցէ՛ք 1895 Եւրօպական երեք պետութիւնների դեսպանական Ծրագրի ներկայացուածը Թիւրքիային, ընդունեցէ՛ք Հայկական սարսափները, ընդունեցէ՛ք Հայ յեղափոխական բողոքները, շարժումները և ապստամբական խլրտումներն ու փորձերը, — այո՛, դրէ՛ք այդ բոլորն այսօր Եւրօպայի առաջ, որին է սահմանւած, վերջին հաշւով, ի թիւս այլոց, Հայկական Խնդրի քննութիւնն ու լուծումը: Բայց զիտցէք, որ դրա համար կայ մի պայման, որ ամենահիմնականն է, մի պայման, առանց որի այս դատը չի լուծւիլ իր բ ու ն իմաստի համաձայն, մի պայման, վերջապէս, որ պարտաւորեցնէ Եւրօպային կատարել ու լրացնել երեսուն չորս տարի առաջ իր վրայ վերցրած դերը:

Եւ ահա այդ պայմանը:

Այդ խնդիրը Եւրօպայի օղում պէտք է բարձրանայ Հայ ժողովրդի հաւաքական ձայնով և բաղխէ Եւրօպայի դռները Հայ ժողովրդի երկաթէ ձեռքով, որ քսան և հինգ տարիից ի վեր եղել է պաշտպան իր կեանքի և ջատագով իր ազատութեան:

Այդ ձայնը, այդ երկաթէ ձեռքը յատնւում են Հայ յեղափոխականները, մասնաւորապէս Հնչակեանները: Նրա՛նք են բուն ժողովրդի ներկայացուցիչները և նրա իրաւունքների բնական պաշտպանները. նրանք են նրա դատի համար մարտնչողները և նրա արիւթիւնն ու յանդգնութիւնը մարմնացնողները. նրա՛նք են կրում նրա պատմական ձգտումները, նրա միտքը, նրա կենսունակութիւնը, նրա զարգացման և ազատութեան զրօշը: Եւ ապա, ուրեմն, նրանց գործն է և նրանց պարտականութիւնը նպատակաշարժար ու որոշ եղանակներով, որոշ ընթացքով, որոշ գործունէութեամբ երևան բերել Հայկական դատի ռամկավարական բնոյթն ու կերպարանքը, թէ՛ ծաւալով և թէ՛ խորութեամբ, և ներկայ տալնապից Հայ ժողովրդին դուրս բերել պատմական նոր այնպիսի ասպարէզ, ուր անհուն է հօրիզոնը և անձալը՝ զարգացման և առաջադիմութեան ուղին:

Ահա՛ թէ ինչ պիտի լինի Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան զիրքը, պարտականութիւնն ու դերը ներկայ տալնապից: Եւ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը պէտք է ձգտէ այդ տալնապից առաջ բերել առաւելագոյն արդիւնք Հայկական դատի նկատմամբ: Նա պէտք է ձգտէ իրականացնել տալ քաղաքական ազատութիւն՝ առաւելագոյն աւանկաւարական իմաստով, որը Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան համար յայտնւում է ա ն հ ր ա ժ ե շ տ մ ի ջ ո յ նրա գործունէութեան յետագայ աւելի ընդարձակ ծաւալման դէպի իր բուն նւապատակները, դէպի իր իղէալները, միջազգային սօցիալիզմի յաղթանակը:

ՍՕՅԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

25 դեկտ. 1912

Ն Ե Բ Կ Ա Ն

Թիւրքիան իր պարտութեամբ փորեց գերեզման իր սեփական ազգի համար: Այդ ազգն այլևս գաղարեց քաղաքականապէս գոյութիւն ունենալ: Նրա վախճանը վրայ հասաւ Հանթաւ հար կերպով: Պաղուց ի վեր օդում կախուած պատմական մաս հանդիսանալ չորս փոքր տէրութիւնների ձեռքը և օրհասական հարւածով իջաւ նրա գլխին: Գաւթի յաղթեց Գողթաթին: Թիւրքիան ինքն է իր անկման հեղինակը: Նա գտնուէր լիովին անգիտակ և անճարակ ձևակերպելու և կաղմելու իրանից ճիւղերով և քաղաքակիրթ ազգ ու պետութիւն, նա՛, որ՝ երկար դարերի ընթացքում ապրեց եւրօպայի ծոցում, ուր չորագոյժ բախտի բերումով Ասիայի վայրի խորքերից՝ եկել էր և ապառաժի պէս քարայրել: Եկա՛ւ՝ բարբարոս, թագաւորեց՝ բարբարոս և ամբողջ դարեր օտար ազգերի ըստըրկութիւնը դարձնելով, իբրև վաճառք, կատարեալ պարածիւր, իր գոյութեան ճիւղիակ աղբւր, կարծեց նրանց արխնով ձեռնադրել նրանց ճիւղիակն ուր գլխից կառուցել պատմական իր գոյութեան ու մեծութեան: Եւ այսօր ինքը խեղդուեցաւ իր սեփական արեան ծովում:

Թիւրքիան քաղաքակիրթ ազգերի շարքում չէր կարողացաւ ունենալ պատմական կուլտուրական և ո՛չ ճիւղ կոչում: Նա հանդիսացաւ միմիայն վայրենի բիրտ ու քայքայիչ գոյութիւն, որ կամ սարսափի մէջ էր գցում եւրօպային, կամ կռուածողիկ յայտնուած հակառակ պետութիւնների համար: Նա հանդիսացաւ դարերի ընթացքում մի պատմական անբնականութիւն, անօժաւիտ որ երկար ժամանակ բարբարոսութեան բարն էր գլորում քաղաքակիրթ աշխարհի ճակատագրի նժարի վրայ: Նա հանդիսացաւ ի վերջոյ ամեն տեսակէտից և ամեն կողմից լիովին ապիկար ստեղծելու իր սեփական գոյութիւնը, և այդպէս քարշարեց իր չարագործ իշխանութիւնը մեծ պետութիւնների հակառակ հակառակ հնորհման: Եւ այսօր նա քարոքանդեցաւ ու տապալեց, իր ետեւ թողնելով ո՛չ միայն ճիւղի շարք հպատակ օտարազգերի տէրակները, այլ և ինքը դատապարտեց գնող և անհետանալ ընդ միշտ՝ մարդկութեան ոխերիմ թշնամիի միակ յիշատակով: Այսուհետեւ նա այլևս իբրև պետութիւն միայն սուեր է, որ անխտառփելի կերպով, կարճ ժամանակում, նսարանալու և անհետանալու է:

Իր գոյութիւնը փրկել երևակայելով, այսօր Թիւրքիան յուսադրում է ինքն իրան նրանով, որ բաղնիսեան չորս յաղթական դաշնակիցները կը պառակտեն այս կամ այն կուլտուրիկ պատճառով: Լօնդոնում ներկայումս տեղի ունեցող խաղաղութեան բանակցութիւնների սեղանի վրայ նա գլորում է մերթ այո, մերթ այն թեղակծիլը, յուսալով որ նա կը խճճէ: Մինչ այժմ չորս դաշնակիցները բնօրինակով և կամ պող կնէրգիայով են ցրել թշուառ մահամեծի յոյսերը: Ակնհայտ է, որ նրանք մտադիր չեն և չեն ցանկանում խաղալիք դառնալ Թիւրքի արևելեան խորամանկութեան: Նրանց դաշնակցութիւնն աւելի հաստատուն, աւելի խորաբնուած, աւելի սերտ է յայտնուած, քան կարելի էր ենթադրել, և դրանում է նրանց միացեալ գոյութեան և նրանց միացեալ յաղթութեան պտուղների արդարաբանական վայելման հիմքն ու գրանականը: Ի՞նչ վախճան կըստանան այդ բանակցութիւնները: Թաղթոյնների և պարտաւճի մէջ չեն կարող տեղի ունենալ կարևոր կոմպրօմիսներ: Հաշտութիւնը կարող է կայանալ այն դէպքում, երբ չորս տէրութիւններն իրանց արխնով ձեռք բերած երկիրներն աւելի դառնան: Մինչ այժմ այդ է եղել նրանց բռնած ընթացքը: Եւ կամ բանակցութիւնները կը վիժեն և պատերազմը կը շարունակէ, առաջ բերելով թերևս համաեւրօպական մեկ ընդհարման սարսափելի աղէտը: Մի կամ միւս դէպքում սակայն՝ մի կէտ, հիմնական կէտը, պէտք

է այժմանից իսկ անդառնալի կերպով պաշտօն համարել — Թիւրքիայի գոյութեան վախճանը:

Ահա այդպիսի հանգամանքներում է, որ ներկայումս արձանացել է Արևելեան Հարցը: Թրակիան, Մակեդոնիան և Եպիրը, անցած իրանց յաղթական եղբայրների ձեռքն, այլևս ազատագրւած են: Ալբանիան ձեռք է բերում ինքնիշխանութիւն: Մեծ տէրութիւնների կարգադրութեամբ: Եւրօպական Թիւրքիայում օսմանեան պետութեան միակ բաժին դուրսէ մնաց Կ. Պօլսը — այդ էլ սուլթանապէս, մինչև մեծ պետութիւնների նո՛ր կարգադրութիւն — և իր արւարձանները կաղմող հողի փոքրիկ լեզակը միայն, որ գնում խրուած է ծովի ջրերում: Դա է այսուհետեւ Թիւրքիան եւրօպայում: Բաց միւս կողմ մնում է ամբողջ Փոքր Ասիայի բախտը, որ Արևելեան Հարցի երկրորդ մասն է և որ Թիւրքիայի ներկայ անկումով առաջ է բերում իր խնդիրները, իր այլ և այլ ազգերի ազատագրութեան խնդիրները, որոնք, իրերի վրա իրան գործութեամբ, պահանջում են շտապօրէն ու բաւարար լուծում: Եւ այստեղ է դորդեան հանգուցը: Տարբեր ու մեծ են եւրօպական տէրութիւնների շահերն առիական Թիւրքիայում մի ծայրից մինչև միւս ծայր: Ակնյայտնի է, որ ներկայ յիւ պարագաներում նրանք կարող են շտապել, այս կամ այն եղանակով, օգտել Թիւրքիայի անկման ժամից և այս կամ այն ձևի տակ իրանց իրաւասութեան տակ առնել Փոքր Ասիայի երկիրները, թերևս "օսմանեան պետութեանը" տալով — մինչև նո՛ր կարգադրութիւն — մի ձևական, ֆիկտիվ իշխանութիւն: Թիւրքիան այսօր նրանց աչքին այլ ևս ոչ ոք չի ու ջախջախւած մի որս է, որ դատապարտւած է կարճ ժամանակում իսպառ պատառ-պատառ լինելու: Եւ կամ ենթադրել արդեօք, որ, իրանց այլ և այլ հակառակ հակառակ շնորհով, մեծ պետութիւնները դեռ կը վարանեն այժմ իսկ անցնել որսորդութեան լայն տաղարեղը, որ Փոքր Ասիան է, և առակներ պատմելով "օսմանեան տէրութեան ամբողջութեան" պահպանման մասին, կը յետաձգեն մինչև իրանց շահերի համար աւելի նպատաստուր մէկ օր: Ի՞նչ էլ լինի, սակայն, ներկայ պատմական րօպի վախճանը, ի՞նչ նոր գրութիւն էլ առաջ դաչ իբրև ներկայի հետևանք Թիւրքիայի շուրջը, ի՞նչ նոր պայմաններ էլ առաջանան վաղան օրը, պարզորոշ է մի կէտ. — Հէ՛նց այսօր՝ եւրօպական Թիւրքիայի անկումով՝ որոշուած է նաև Փոքր Ասիայի ճակատագիրը, Հէ՛նց այսօր պայմանաւորուած է նրա բախտը, Հէ՛նց այսօր գծագրւած է նրա ապագան: Խնդիրը բաղնիսեան չորս պաշտօնակիցների կողմից իրանց յաղթութեան բաժինների ստացման մասին չէ միայն, այլ ամբողջ օսմանեան պետութեան ոչնչացման ու վախճանի մէջն է իր եւրօպական, որպէս և առիական երկիրներով: Դրանով մն է ահա պատմական րօպի մեծ խորհուրդը:

Ահաւոր խորհուրդ, որի գաղափարով ծոցում թաղնւած է նաև Թիւրքահայ ժողովրդի բախտի վճիռը: Ներկան պահանջում է հայկական խնդրի լուծումը: Նա պէտք է առաջ խաղայ և արձանանայ մեծ պետութիւնների հանդէպ: Նա պէտք է հանդիսանայ իբրև անպայման հետևանք, որ ստեղծել է ներկան Թիւրքիայի շուրջը: Նա պէտք է ստանայ վերջապէս և անյետաձգելի կերպով իր բաւարար և նպատակայարմար լուծումը: Ուրիշ ազգերի շարքում պէտք է սպասարկուի Թիւրքահային էր:

Ներկայ պայմաններում որո՞նք են այն եղանակները, որոնց միջոցով կարելի լինի հզօր կերպով առաջ բերել հայկական դատը և նրա լուծման անմիջականութեան պահանջը դնել եւրօպայի առաջ: Պատասխանելու համար այդ հարցին, որ գործնականութեան հողի վրայ է գտնուած, պէտք է նախ որոշել թէ ինչու մն է կայանում հայկական դատի լուծումը:

Հայկական դատը վերջին քսան և հինգ տարւայ ընթացքում շարունակաբար կրել է յեղափոխական տէնդէնցիա և յեղափոխական իմաստ: Արիւնահեղ ջարդերն անգամ չկարողացան կերպարանափոխել և շեղել իր յեղափոխական բնոյթից ու դրօշմից Հայկական դատի ներքին նշանակութիւնը: Աւելի ևս. Թիւրքիայի այդ արիւնախումբ ընթացքն աւելի բացարձակ ապագայից եղաւ Հայ ժողովրդի կենցաղաւրութեան որպէս քաղաքական, նոյնպէս սոցիալ-տնտեսական պայմանների աղաղակիչ անբնականութեան ու յուսկութեան: Այդ երևոյթներն իմաստն աչն է, որ Հայ ժողովրդի կենսական ու կոյրութեան պահանջները պատմականապէս այնքան հաստատուեցել են, որ կեանքի ներկայ պայմաններում այլ ևս չեն գտնուում ոչ թի բաւարարութիւն և ճիշդ և ոչ թի արաւայայտութիւն: Բողբոջն արդէն քցւել է և ներքին Հիւթի ոյժով ու ճղումով ձգտում է պատուել իր կեղեք, դուրս ժայթքել և ծաղկել ազատ արևի տակ: Ահա այդ պատմական պրօցէսի մէջն է կայանում Հայկական դատի յեղափոխական իմաստն ու նշանակութիւնը: Ահա դա՛ է պատմական Հիւթը և գործնական անխտափելիութիւնը յեղափոխական գործունէութեան: Ահա՛ դա է պատճառը յեղափոխական գաղափարի ծաւալման, որ յայտնուում է Հայկական կեանքի պատմական ներքին ֆատալ գործողութեան արտայայտիչը և այդ գործողութեան զարգացման համար ազատ ուղի բացողը: Այդպիսով, բնական գոյութեան ներքին տրամաբանութեան զօրութեամբ, ամեն հասարակական երևոյթ Հայկական կեանքում դուրս ժայթքելով, ընդունում է յեղափոխական բնոյթ և իմաստ, նոյնպէս բնական կերպով, ինչպէս նախահողից ժայթքում է նախի սիւնը:

Այդ դրութեան մէջ էր Հայկական դատը, երբ ղեկուորական յեղափոխութեամբ ընկաւ համիդական արիւնալի բռնակալ ըէթիմը և հաստատուեց սահմանադրութիւն: Այդ սահմանադրութիւնը, սակայն, առաջած չէր ժողովրդեան խաւերից, ներքին, Թիւրքական կեանքի ներքին տրամաբանութեամբ: Նա արդիւնք էր պալատական ու ղեկուորական կուսակցութիւնների ներքին կռիւների ու թշնամութեան, և տապալելով սուլթան Համիդին, Երիտասարդ Թիւրքիան բնու յեղափոխած չէր իր երկրի կենցաղաւրութեան յարաբերութիւնները: Նա արձանագրեց իր դրօշի վրայ Սահմանադրութիւն բառը միայն և ինքնազօր պարլամենտի փոխարէն հաստատեց "ժողովրդային" ներկայացուցչութեան մի ողորմելի պարօղիա, "խորհրդատու" ու հնազանդ մի մարմին: Հին ղիմին լցրեց միայն նոր կարասում — և այդ Հին ղիմում մէջ ներքին եռումը շարունակեց առաջւայ պէս: Երիտասարդ Թիւրքիան չը ստեղծեց նոր Թիւրքիա, և չէր կարող ստեղծել այն սահմաններում, որպիսին նա տեղ էր սահմանադրութեան: Նա մնաց նոյն Հին Թիւրքիան և դատապարտւած էր նոյնը մնալու սահմանադրութեան հէնց առաջին օրից սկսած, քանի որ այդ "նոր" ըէթիմը, հակառակ իր անւան ու տաւրին, շարունակում էր ունենալ իբրեւ հիմք Հին ըէթիմի բնոյթը և իմաստը: Սահմանադրութիւնը մեռեալ ծնած էր: Եւ երկրի նոյն Հին դրութիւնը, նախկին հասարակական յարաբերութիւնները միջոց չունենալով հետևողաբար ենթարկւելու փոփոխման ու յեղաշրջման, նա յայտնուեցաւ Հին ըէթիմի բաղդատութեամբ *blanc bonnet, bonnet blanc*.

Դա՛ մի կողմից: Միւս կողմից՝ այդ ապիկար, այդ ներքնապէս հիւսնող ծնած "սահմանադրութիւն", ուրեմն, չէր կարող ստեղծել երկրում այնպիսի պայմաններ, որոնք միջոց տային ամեն մտքերի, ամեն ուղղութիւնների, ամեն ծրագրերի ազատ արտայայտութեան և բոլոր քաղաքական առաջագիծ կուսակցութիւնների ազատ գործունէութեան: Եւ հէնց իր գոյութեան առաջին օրից ակնյայտնի եղաւ, որ քա-

ղաքական կուսակցութիւնների առաջխաղացման համար ապարհեղ փակ էր, որ սահմանադրութիւնը ոչ միայն ռամկավարական չէր գէթ մինչև մի յայտնի աստիճան և կամ նոյն լակ լիբերալ, այլ կրում էր ղիմորական ու բիւրօկրատ-կղերական բացայայտ դրօշմ: Այդպիսով և ոչ մի հող չէրաւ ռամկավար կամ սոցիալիստական օրինական աշխատութեան համար, ոչ մի միջոց ու պայման չէրաւ ազատ ագիտացիայի, պրօպագանդայի և ժողովրդային խաւերի ու պրօլետարիատի ինքնագիտակցութեան զարգացման և ինքնակազմակերպութեան համար: Եւ Թիւրքիայում ապրող աւելի կուլտուրական ազգերի, ուրեմն և Հայ ժողովրդի, հանրակացութեան ներքին յեղափոխական արամաբանութիւնը չունեցաւ արտայայտութեան ասպարէզ: Այդպէս պատմականապէս հաստատուեց Հիւթեան Մրդալի Հիմնական դրութիւններից մէկը. — այն, որ ժողովրդային զարգացման ու բարօրութեան հասնելու քաղաքական գլխաւոր պայմանն է առաւել կամ նազ — և ևս աւելի՛ ընդարձակ — ռամկավարական սահմանադրութիւնը:

Եւ այսօր այդ "նոր" Թիւրքիան տապալեց, նրա անկումն օրհասական կերպով պէտք է տեղի ունենար մէկ օր: "Նոր" Թիւրքիան մնացել էր Հին ըէթիմ, "Երիտասարդ" Թիւրքիան մնացել էր ծերացած Թիւրքիա: Դժբախտ, ֆատալ հետևանք քաղաքական ապիկարութեան և Թիւրք ազգային կեանքի բարբարոսական, յետամնաց կերպերի ու պայմանների:

Եւ ահա՛ հասաւ այսօրւայ ներկան: Իրերի դրութեան ներքին ընթացքը Թիւրքիային հասցրեց մինչև անկում և այժմ այնտեղ, խկապէս իրանց ընկի պատմական երկիրներում, աղբերն ընկել են համաճարակ հրդեհի մէջ և այսպէս կամ այնպէս պէտք է կոչեն. "ազատւիր ով կարող է", պէտք է ճիգ թափեն փրկելու օսմանեան պետութեան աւերակների տակից, որ սպառնում են նրանց իսպառ ջախջախել ու մահացնել:

Հայկական դատը, որ կարող էր գտնել իր լուծումը մի ռամկավարական սահմանադրութեան ներքոյ, ներկայ րօպէիս, իրերի դասաւորութեան շնորհով, պատմական պատեհութեամբ ընդունում է յանկարծ մի նոր վիճակ և արձանանում իբրեւ մէկ ամենահրատապ խնդիր, պահանջելով իր անմիջական լուծումը: Հայկական կեանքի ներքին տրամաբանական իմաստը լինելով յեղափոխական, բնական ու պատմական պահանջ է, որ այդ դատի լուծումը կրէ և ամփոփէ իր մէջ Հայ բուն յեղափոխական մտքի քաղաքական և սոցիալ-տնտեսական առաւելագոյն իմաստը: Այլ խօսքով, անհրաժեշտ ու հիմնական պայման է, որ այդ դատի լուծման մէջ ներառուէ Հայ յեղափոխական մտքի էութեան առաւելագոյն ռամկավարական մասը, այնքան առաւել, որքան այդ ներում են, յեղափոխական տեսակետից, ներկայ քաղաքական պայմանները: Եւ դա պէտք է կազմէ նրանց ներկայ րօպէի է անմիջական գործունէութեան ծրագիրը:

Ահա՛ թէ ինչու միայն յեղափոխականներն են կարող լինել ընդունակ — և բնականապէս կոչւած — Եւրօպայի առաջ արտայայտիչ ու ջատագով կանգնելու հայկական դատի: Ահա՛ թէ ինչու նրանց վրայ է ընկնում այսօր, ինչպէս երէկ և ինչպէս վաղը, սուրբ պարտականութիւնը յարմարագոյն եղանակներով ամեն ջանք գործադրել իրականացնելու համար հայկական դատի բաւարար ու նպատակայարմար լուծումը: Եւ ահա՛ թէ ինչու նրանց դրօշի վրայ պէտք է արձանագրուած լինի Հայ սոցիալ-դեմօկրատիայի ծօտակայ, գործնական պահանջների ծրագիրը. և մենք ասում ենք՝ Հայ սոցիալ-դեմօկրատիայի, որովհետև Հայ իրականութեան յեղափոխական մտքի, որպէս և Հայ ժողովրդի զարգացման պահանջների բուն ու ճշմարիտ արտայայտիչն է Հայ սոցիալ-դեմօկրատիան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ԵՒ ԵՒՐՕՊԱՅԻ ԴԻՐՔԸ

Այն քառուրդ, որ այս րօպէիս տիրում է Արեւելեան Խնդրի շուրջը, միութեան մէջ է պահում եւրօպական պետութիւնները ներկայ վերաբերութիւնն ու դիրքը մասնաւորապէս Հայկական Հարցի նկատմամբ: Ժամանակ առ ժամանակ միայն մէկ աղօտ լսյս գուրս է ցայտում քաղաքական այս կամ այն անկիւնից և անորոշ կերպով սփռւում թիւրքահայ ժողովրդի բախտի վրայ: Դա բաւական չէ որ և է պարզ եզրակացութեան յանգեալ համար: Կան, սակայն, քաղաքական, եթէ կարելի է այսպէս ասել, համակրանքներ ի նշոյլներ: Թւում է, թէ Եռեակ Համաձայնութիւնը նկրտումներ ունի Հայկական Հարցին իր ժամին մէջտեղ դրած տեսնելու: Թւում է, թէ այդ հարցը ներկայ պարագաներում ընդունում է նրա աչքին որոշ նշանակութիւն իբրև քաղաքական մի զէնք Թիւրքիայի դէմ, մի զէնք, որ նրանք ուզում են դաժնակեան սրի պէս կախաւ ներկայացնել օսմանեան պետութեան գլխին և այդպիսով հարկադրել նրան զիջողութիւնների ուղին ընտրել իր բանակցութիւններում բաղկանեան տէրութիւնների հետ: Թւում է, թէ, միւս կողմից, եթէ քաղաքական դրութիւնն աւելի բարդ է և միջոցառումն աւելի խտանայ, Արեւելեան Խնդիրը կընդունէ իր տմբողջական ծաւալը, այսինքն կը դառնայ ո՛չ միայն եւրօպական Թիւրքիայի ճակատագրի խնդիր, այլ համասօմանեան խնդիր: Այդ դէպքում պարզ է, որ Հայկական Հարցը կոչւած է ունենալու իր բաժինն ու դիրքը եւրօպական պետութիւնների արեւելագիտ առաջ:

Եւրօպական ճամուլի մեծագոյն մասը, մասնաւորապէս Անգլիայում, Ֆրանսիայում և Ռուսաստանում, չէ զանում ի հարկին երևան բերելու Հայկական Հարցի գոյութիւնը և նրա հերթական նշանակութիւնը: Դա կարող է լինել գուցէ միմիայն փայտէ սուր, որպիսին խաղացնում են դերասանները թատրոնական բեմի վրայ: Եւ այդ փայտէ սուրն իր արծաթաթուղթ փայլով գուցէ առժամանակ շողշողայ դիպլոմատիայի փոփոխական արևի ճառագայթներից: Պարզ է սակայն, որ զգացւում է Եռեակ Համաձայնութեան դիպլոմատիայի մթնութեան մէջ մի խուլ տէնդէնցիա. — ներկայ րօպէիս հայ ժողովրդին տեսնել արթուն, անհանգիստ, պահանջող, նոյն խուլ խրատման մէջ: Դա կը հանդիսանար մի նոր ֆակտոր օսմանեան պետութեան դէմ, մի նոր ֆակտոր թիւրքահայ ժողովրդի ինքնագիտակցութեան, ֆակտոր ի թիւս արդէն այլ պայմանների — հայ յեղափոխական անցեալ շարժումների և հայկական սարսափների: Եւ, ուրեմն, այն րօպէին, երբ թիւրքա առաջնաւոր Թիւրքիայի շուրջն աւելի բարդ պայմաններ, Եռեակ Համաձայնութիւնը փորձէ, բնականաբար իր ներքին քաղաքական շահերի համար, առաջ գցել Հայկական Հարցը և զրա պլատֆորմի վրայ տիպէ իր սեփական զիտումների պահանջներն օսմանեան պետութիւնների: Ճիշդ է, այսպիսի կնճառ հանգամանքների զուգակայութիւնից և ընդհարումներից կարող է գուցէ նպաստաւոր արդիւնք առաջ գալ Հայկական Հարցի համար: Բայց որքա՞ն կարող

են նաև ահաւոր լինել իրանց հետեանքներով այդ դիպլոմատական խաղերը, եթէ Հայկական Հարցի լուծումը, այդ բոլորից յետոյ, մնայ առկա . . .

Ճարտույտ չըկայ, որ Եռեակ Համաձայնութիւնն ունի ներքին դիտումներ Հայկական Հարցի նկատմամբ: Թէ որոնք են այդ դիտումները՝ որոշել դժւար է, քանի որ նրանք գաղտնի են: Անկասկած, այդ դիտումները հաստատւած են իր, Եռեակ Համաձայնութեան, արևելեան շահերի վրայ: Նովա խնդիրը նրանումն է, ուրեմն, թէ որքա՞ն ներկայումս այդ շահերը համապատասխան են թիւրքահայ ժողովրդի ազատագրութեան պահանջին: Ապա, այդ շահերի գործադրութիւնն ու պահուումը կարող է ստանալ այն ձևը և այն միտքը, որպիսին կը թելադրէ քաղաքական մի որոշ րօպէ: Բայց և այդ րօպէն կարող է թերևս բոլորովին չը համաձայնեցնել թիւրքահայ ազատագրութեան պահանջը Եռեակի շահերի հետ. հետևաբար այդ դէպքում կը առնուէ առաջինը յօգուտ երկրորդի, այսինքն Հայկական Դատի լուծումը կը ստանայ այնպիսի մի և զա՞ն ա կ, որ հակառակ կը յայտնէ Հայկական շահերին: Դա՞ մի կողմից: Միւս կողմից, կարող են առաջանալ գուցէ այնպիսի քաղաքական նոր պայմաններ, որոնց միջոցին Եռեակ Համաձայնութեան արևելեան քաղաքականութեան համար ձեռնառու չի համարուի Հայկական Հարցի բացումն իսկ և, նորից դարձնելով նրան թղթէ կտոր, կը շարունակէ դիպլոմատիայի անյատակ դաժբիւրդը:

Ահաւոր խնդիրներ . . .

Այսպէս, եւրօպական քաղաքականութեան քառասական դրութիւնն իր անթափանց քողն այս րօպէիս տարածել է նաև Հայկական Հարցի վրայ: Ինքը լինելով անորոշ, առաջժմ անորոշ է նաև այն դիրքը, որ նա կունենայ դէպի այդ հարցը: Կան, ինչպէս ասացինք, քաղաքական համակրանքներ, բայց և չկայ նշոյլ քաղաքական գործնական միջամտութեան: Հէնց այդ միջամտութեան առաջն առնելու համար է արդէն, որ օսմանեան կառավարութիւնն այսօր շտապում է թիւրքական խաբէբաշտութեան ձևակերպութիւններով ինչ-որ մասնախումբ իրր թէ կազմել Հայկական գաւառներում "լէֆօրմներ"՝ ճշտցնելու: Հի՛ն, խորամանկ կատակերգութիւն, սակայն, որ միայն առաջացնում է դառն քծնածաղ: Դարերից ի վեր Թիւրքիան եղել է լոկ վաշրենի բռնի գորութիւն և քանի կենդանի է՝ կը մնայ միշտ նոյնը:

Ահա Հայկական դատի այսօրայ րօպէական դրութիւնը Եւրօպայում: Ընդհանուր քառսում նա խարխափում է տալաւին և չէ տրւած նրան ո՛չ մի գոյն, ո՛չ մի կերպարանք և ո՛չ մէկ ուղի: Եթէ կայ այդ քառսում մի բան տեսնելի, դա ա՛յն է, որ այսօր Հայկական Հարցը նորից երևաւ է եկել, իր հին վերբերը բացած համայն աշխարհի առաջ և արիւնկայ ուրականի պէս գառն կշտամբանքը և յանդուգն խօսքը շրթներին՝ պահանջում է հայ ժողովրդի ազատ գոյութեան իրաւունքն ազատ ժողովրդների արևի տակ:

Այդ դիրքն ըստ ինքեան մեծախորհուրդ է և յուսադրական: Ապա ուրեմն մեզնից է կախաւ ներկայ քաղաքական րօպէի իմաստի թելադրութեամբ որոշել մեր այսօրեան անմիջական անելիքը և թափել ամեն ջանք ամբարանդելու այդ դիրքը և նրա խորհուրդն ու յոյսը դարձնել իրականութիւն:

ԲԱԶԷԼԻ ԿՕՆԳՐԵՍԸ

Բալկանեան պատերազմը և եւրոպական ընդհարման վտանգը, այս սպառնական ու անակնկալ հարցերն էին ցցուած միջազգային սօցիալիզմի առաջ, որը որպէս խաղաղութեան միակ ճշմարիտ պաշտպանն ու դօրապիղը, միանգամ ևս ստիպուած էր բողոքի իր ազդու ձայնը հնչեցնելու տիրապետողների ականջին:

Նոյեմբեր 23-ին, Բրիւսէլի միջազգային սօցիալիստական բիւրօն արտակարգ կօնգրէսի էր հրաւիրել բոլոր երկրների սօցիալիստներին՝ համախորհուրդ միջոցներ ձևւորելու թերեւ ծագելից ընդհանուր եւրոպական պատերազմի պատահականութեան դէմ, որի վրդովիչ նշանները զիտուորապէս արտայայտուած էին ֆինանսական տագնապով և աւստրիական զօրաշարժով: Այդ կօնգրէսը կայացաւ Շւէյցարիա, Բազել (Բալ) քաղաքի մէջ:

25-ից աւելի անգլոթեանց պատկանող սօցիալիստական բոլոր հեղինակաւոր ներկայացուցիչները ներկայ էին այդ կօնգրէսին, որի դերը, եւրոպական բոցավառումի անգամաւոր չարիքները կանխելու տեսակէտից, պատմական մեծ նշանակութիւն ունէր: Պրօլետարական ազատագրութեան իդէալը և խաղաղութեան անկեղծ սէրը կողք-կողքի էր բերել օսմանսան, բալկանեան, աւստրիական ու ռուսական պատերազմներին, որոնք անխտիր իրենց գայրոյթն ու ատելութիւնն էին արտայայտում պատերազմի դէմ:

Նշանակաւոր օրը, Munster բողոքական հինաւուրց եկեղեցու դանդաղների ղօղանջիւնը աւետում էր կօնգրէսի բացումը: Առաջին անգամն էր, որ Միջազգայնականը գումարում էր մի եկեղեցում և այդ իրողութիւնը ակամայ յիշեցնում էր Միջին Դարը, երբ եկեղեցում կը գումարէին որոշ օրեր և յանուն խաղաղութեան՝ աւատապետները պէտք է դադարէին իրար դէմ կռիւ մղելուց: 20-րդ դարում, սակայն, սօցիալիստական Միջազգայնականն է, որ եկեղեցում՝ կապիտալիստ կառավարութիւններին հարկադրում է յարգելու աշխարհի խաղաղութիւնը:

Տեղի սղութիւնը, դժբաղդաբար, մեզ չի ներում ժողովի վիճաբանութիւնը ներկայացնել մեր ընթերցողներին: Այսքանը ասենք, որ 3 օրւայ շարունակական նիստերից յետոյ, ուր այլևս ո՛չ մի հատուածական բաժանում, ո՛չ մի քաղաքական բաղիւում չէր արտայայտում, կօնգրէսիստները խանդավառ ծափողջոններով միաձայն քւէարկեցին հետեւալ Մանիֆէստը, որ ներկայացնում ենք այստեղ:

ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ՄԱՆԻՖԵՍՏԸ

Մանիֆէստը նախապէս յիշեցնելով Շուտագարտի և Կօպէնհագէնի կօնգրէսների որոշումները պատերազմի մասին, շարունակում է. —

Աւելի քան երբէք, ներկայ անցքերը միջազգային պրօլետարիատի վրայ օրինական պարտք են դնում՝ իր համակերրոնացած գործունէութեան պահանջաւ թափն ու կորովը տալու. մի կողմից, ղինաւորման համաշխարհային խնդիրները առնեցնելով կեանքի սղութիւնը, սաստկացրել է դասակարգային հակամարտութիւնները և դրժաւոր դասակարգի մէջ ստեղծել է անհանդուրժելի մի նեղութիւն: Պրօլետարիատը ցանկանում է վերջ տալ սարսափի ու վառնումի այդ ըէժիմին: Միւս կողմից, պարբերաբար կրկնող պատերազմական սպառնալիքները հետզհետէ աւելի և աւելի ըմբոստեցուցիչ են դառնում և եւրոպական ժողովրդները մշտապէս իրար դէմ կուէրու վտանգի մէջն են, առանց որ կարելի լինի մարդկութեան և բանականութեան դէմ գործած այդ ոճիրները արդարացի ազգային շահի առնաւորքը պատրաստել:

Բալկանեան ճգնաժամը, որ այնքա՛ն աղէտներ պատճառել է արդէն, քաղաքակրթութեան և պրօլետարիատի համար ամենազարհուրելի վտանգը պիտի դառնայ՝ ընդհանրապէս: Նա պիտի դառնայ, միանգամայն, պատմութեան ամենամեծ գայթակղութիւններից մէկը, որովհետեւ չարիքի անհունութիւնն ու առարկած շահերի ունայնութիւնը անհամեմատելի են:

ԴՈՐԾԱԻՈՐԱԿԱՆ ՈՒ ՍՕՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՈՒՅՆՈՒԹԻՒՆԸ

Կօնգրէսը, ուրեմն, ռւրախութեամբ է հաստատում այն իրողութիւնը, որ բոլոր երկրների սօց. կուսակցութիւններն ու արհեստակցական միութիւնները լիովին համաձայն են պատերազմի դէմ պատերազմ յայտարարելու համար:

Ամենուրեք գործաւորները միաժամանակ ընդլիմացել են նաւաճման քաղաքականութեան:

Միջազգայնականի ամեն մի բաժինը իր երկրի կառավարութեան հակադրել է պրօլետարիատի ընդլիմութիւնը և իր ազգային հասարակական կարծիքը լարել է պատերազմի ցնորքների դէմ:

Այդպիսով բոլոր երկրների գործաւորները կազմել են յաղթական մի գործակցութիւն, որ արդէն մեծապէս նպաստել է աշխարհի վտանգաւ խաղաղութիւնը փրկելու:

Պրօլետարական յեղափոխութեան տիրող դասակարգերին պատճառած վախը, մի յեղափոխութիւն, որ համաշխարհային պատերազմի հետեւանքը պիտի լինի, խաղաղութեան էական երաշխիքը եղաւ:

Կօնգրէսը հրահանգում է բոլոր սօց. կուսակցութիւններին եռանդուն կերպով շարունակել իրենց գործունէութիւնը, ի գործ դնելով նպատակադարձ դատում բոլոր միջոցները: Միացեալ այդ գործունէութեան համար, կօնգրէսը իւրաքանչիւր կուսակցութեան հրահանգում է կատարել իրեն յատուկ աշխատանքը:

ԲԱԿԱՆԵԱՆ ՍՕՅԻԱԼԻՍՏՆԵՐԸ

Բալկանեան սօցիալիստները պէտք է ընդլիմանան հին թշնամութեանց վերարժարծմանը:

Այդ տեսակէտից բալկանեան թերակղզու կուսակցութիւնները ծանր աշխատանք ունեն կատարելիք:

Եւրոպական մեծ պետութիւնները բարենորոգումներու սխտէճատիկ յետաճգումով՝ Թիւրքիայում նպաստեցին ստեղծելու տնտեսական և քաղաքական մի անխշանութեան, ինչպէս նաեւ ազգային կրքերի բորբոքման, որ անհրաժեշտօրէն առաջ պիտի բերէր ըմբոստութիւն և պատերազմ ընդդէմ դրամատէր դասակարգերի և ղինաստիաների շահագործման:

Բալկանեան սօցիալիստները հերոսական քաջութեամբ հրապարակ դրին Բալկանեան մի ռաճկավարական դաշնակցութեան պահանջները: Կօնգրէսը նրանց առաջարկում է

յարատեւել իրենց սքանչելի ուղղութեան մէջ: Նա յոյս է տածում որ Բաղկանեան սօցիալ-դեմոկրատիան ամեն միջոց ձեռք կառնի, որպէսզի ահռելի զոհողութիւններով նւաճւած արդիւնքները չհրաււրն ու յափշտակելի դիմատիւնները, զինւորականութեան և զարգացման ծարաւի Բաղկանեան բուրժուակրայի կողմից:

Կօնգրէսը ծանաւորապէս պահանջում է Բաղկանեան սօցիալիստներից ոչ ժող մաքառելու ո՛չ ծիայն սերքերի, բուլգարների, ռումանացիների և յայնքի Հին ատելութեանց վերաբարձարձման դէմ, այլ ամեն մի ճիշման դէմ, որ զորք կը դրւի Բաղկանեան միւս ժողովրդների վրայ, — թուրքերն ու ալբանացիները, — որոնք այժմ Հակառակ բանակումն են գտնում:

ԱՆՔԱՆԻԱՅԻ ԵՒ ՍԵՐԲԻԱՅԻ ԻՆՔԻՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Բաղկանեան սօցիալիստները պարտաւոր են կուռել այն ժողովրդների իրաւունքների նկատմամբ կատարւած բռնաբարութեանց և շղթայադրեմ եղած ազգային կրքերի ու շօվինիզմի պէմ՝ պաշտպանել Բաղկանեան բոլոր ժողովրդները, նմանապէս ալբանացիների, թուրքերի ու ռումանացիների եղբայրութիւնը:

Աւստրիայի, Հունգարիայի, Կոսովաթիայի, Սլաւոնիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի սօցիալիստները պարտաւոր են ամբողջ ուժով շարունակելու իրենց եռանդուն ընդդիմութիւնը Դանուբեան միապետութեան կողմից ընդդէմ Սերբիայի գործածած ամեն մի յարձակման:

Նրանք պարտաւոր են զինադրելու, ինչպէս որ այդ աւել են մինչև այժմ, ա՛յն քաղաքականութեան որ ձգտում է գէնքի ոչ ժող, Սերբիային դրկել իր թափած ջանքերի արդիւնքից, վերածել նրան աւստրիական մի գաղութի և կայսերական շահերի համար Աւստրիոյ-Հունգարիայի ժողովրդներին ու եւրոպայի բոլոր ազգութիւններին ենթարկել ամենամեծ խտրութիւնը:

Աւստրիոյ-Հունգարիայի սօցիալիստները ապագայում պէտք է կուռն նոյնպէս, որ Հաբսբուրգեան տոհմի տիրապետութեան տակ գտնուող Հարավային սլաւոն Հատաձնները, աւստրիական միապետութեան մէջ, ռամկավարօրէն կառավարւելու իրաւունքը, ինքնավարութիւնը ձեռք բերեն:

Աւստրիոյ-Հունգարիայի ու Իտալիայի սօցիալիստները մասնաւոր ուշադրութիւն պէտք է դարձնեն Ալբանական Հարցի վրայ: Կօնգրէսը ընդունում է ալբանական ժողովրդի ինքնավարութեան իրաւունքը, բայց նա չի ընդունում, որ ինքնավարութեան պատրասկով Ալբանիան զոհ գնաց Աւստրիոյ-Հունգարիայի և Իտալիայի փառախնդրական շահերին:

Կօնգրէսը այդ իրողութեան մէջ տեսնում է ո՛չ ծիայն մի վտանգ՝ նոյն ինքն Ալբանիայի համար, այլ և Աւստրիոյ-Հունգարիայի և Իտալիայի միջև մօտաւոր ապագայում խաղաղութեան դէմ մի սպառնալիք է նկատում: Ալբանիան կարող է խկապէս անկախ կեանք վարել միայն ա՛յն ժամանակ, երբ նա Բաղկանեան ռամկավարական դաշնակցութեան ինքնավար մի անդամը կը դառնայ:

Կօնգրէսը, ուրեմն, աւստրիական և իտալական սօցիալիստներին հրահանգում է կուռել ամեն մի փորձի դէմ, որով իրենց կառավարութիւնները կաշխատեն Ալբանիան իրենց ազգեցութեան շրջանակի մէջն առնել: Նա պահանջում է նրանցից շարունակել իրենց ջանքերը՝ Աւստրիոյ-Հունգարիայի մէջ խաղաղութիւնը ապահովելու համար:

Մանիֆէստը այնուհետև կոչ է ուղղում Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Անգլիայի սօցիալականութիւններին՝ պատերազմի դէմ ամեն միջոցներով պայքարելու և խաղաղութիւնը պաշտպանելու:

Համար: Հետեւեալ ազգու տողերը կազմում են Մանիֆէստի վերջաբանը:

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Կօնգրէսը հաստատում է, որ ընդհանուր սօցիալ-գայնականը համաձայն է արտաքին քաղաքականութեան վերոյիշեալ էական գաղափարներին:

Նա բոլոր երկրների գործաւորներից պահանջում է կապիտալիստական իմպերիալիզմին հակադրել պրօլետարիատի միջազգային համերաշխութիւնը: Նա բոլոր երկրների տիրող դատարարներին ազդարարում է, որ պատերազմական գործադուլիւններով աւելի ևս չստատկացնեն կապիտալիստական արտադրութեան եղանակի մասնաներին պատճառած թշուառութիւնը: Կօնգրէսը յանկանում է, պահանջում է խաղաղութիւն:

Թող կառավարութիւնները լաւ իմանան, որ եւրօպայի արդի կացութեան և գործաւոր դատարարի ներկայ մտաւոր տրամադրութեան ժամանակ՝ անկարելի է պատերազմ յարուցանել ստանց իրենց սեփական գոյութիւնը վտանգի ենթարկելու:

Թող նրանք մտաբերեն, որ Փրանսա-գերմանական պատերազմը Կօնգրէսի պայթումը ստեղծեց, որ ռուսօւս-ճապօնական պատերազմը Ռուսաստանի ժողովրդներին յեղափոխութեան մղեց: Նրանք թող յիշեն նոյնպէս, որ զինուորական ու նաւային ծախսերի աճումը պատճառ է եղել մէկ արտակարգ ուժգնութեան սօցիալական ընդհարումներին և առաջ է բերել վիթխարի գործադուլներ:

Նրանք խելագար կը լինէին եթէ չզգային, որ հրէշային պատերազմի գաղափարն անգամ բոլոր երկրների պրօլետարիատի գայրոյթն ու ցատումն է գրգռում:

Ի՞նչու և ի՞նչու չեն ձգտում կապիտալիստների շահերի, զինատիրանների փառասիրութեան կամ գաղտնի դաշնագրութիւնների բաղկացութեանց:

Եթէ կառավարութիւնները՝ կանոնաւոր բարեշրջման կարելիութիւնը ջնջելով՝ համայն եւրօպայի պրօլետարիատին մղեն յուսահատ սրտշուններ ձեռք առնելու, այն ժամանակ իրենք պիտի կրեն իրենց ստեղծած ճգնաժամի ամբողջ պատասխանատւութիւնը:

ՄԻԱՍԶԳԱՅԻՆ ՊՐՕԼԵՏԱՐԻԱՏԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՍՍԻԱՆ

Միջազգայնականը պիտի կրկնապատկէ իր ջանքերը, որպէսզի իր հետզհետէ աւելի ուժգին պրօպագանդային ու ազդու բողոքովը պատերազմի պայթումը նախազգուշացնէ:

Այդ նպատակով Կօնգրէսը միջազգային սօցիալ-բուրժուային յանձնարարում է ուշի ուշով հետեւել ներկայ անցքերին և բոլոր երկրների գործաւորական կուսակցութիւններին մէջ, ինչ էլ որ լինի, պահպանել յարաբերութիւններն ու կապերը: Պրօլետարիատը գիտակից է ա՛յն իրողութեան, որ ներկայումս մարդկութեան ամբողջ ապագան իրանից է կախւած, ուստի նա պէտք է իր ամբողջ խանդը գործ դնէ և արգելք լինի վտանգած ժողովրդների մատաղ սերնդի բնաջնջման, որպէս և հանրային ջարդերի, սովի ու ժանտախտի սարսափներին:

Կօնգրէսը կոչ է ուղղում ձեզ բոլորիդ, պրօլետարներ և սօցիալիստներ բոլոր երկրների, որպէսզի արդի վճռական լուսնակում դուք ձեր բողոքի ձայնը բարձրացնէք և արտայայտէք ձեր կամքը՝ ամեն ձևով և ամեն տեղ:

Ուժգին բարձրացրէք ձեր միաձայն բողոքը պար-
լամենտների մէջ. միացէ՛ք մասսայական գործողութիւն-
ների և ցույցերի համար, օգտագործեցէք այն բոլոր
միջոցները, որ պրօլետարիատի կազմակերպութիւնն ու
ոչ ուրիշ քան ձեր տրամադրութեան տակ, այնպէս որ կա-
ռավարութիւնները շարունակ զգան թէ՛ իրենց առջև ար-
ձանացած է խաղաղութեան ակոյցի գործաւոր դա-
սակարգի ուշադիր ու գործօն կամքը:

Այդպիսով շահագործման ու ուժի կապիտա-
լիստական աշխարհին հակադրեցէ՛ք խաղաղութեան
ու ժողովրդների միութեան՝ գործաւորական աշխարհի
հանրութիւնը:

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(ԹՌՌԻՑԻԿՆԻ ԱԿՆԱՐԿ)

Սրանից ընդամենը 6-7 տարի առաջ, երբ ռուսական
մեծ յեղափոխութեան գոռ ակիքները եկան զարնելու նաև
թմրած Արևելքի դարևոր ժայռերին, Պարսկաստանը առաջինը
եղաւ որ սթափելով դիմեց նոյնպէս յեղափոխութեան՝ առաջա-
լելու համար կապարի նման իրեն վրայ ծանրացող Շահերի,
Փեղալների և բարձր հոգևորականութեան բռնակալական ու
սպանիչ լուծը: Բռնկած յեղափոխութիւնը կարճ միջոցում
իւր շուրջը բոլորեց պարսիկ ժողովրդի ամենատառջադէմ և
դէմոկրատիկ շարժումը: Երբեք չէր տեսնուած իսկ
ուշիմը, ցնծութեամբ արձագանք տւեցին Պարսկաստանի ա-
զատագրութեան համար մարտնչող յեղափոխական խմբերի կո-
չերին և խտացնելով ազատարար բանակի շարքերը՝ յաղթա-
կանօրէն դիմեցին դէպի բռնակալութեան որջը — Թէհրան:
Ժողովրդի անթիւ զահերի գնով տապալեց դարևոր բռնակա-
լութիւնը, գահընկեց եղաւ Մահմադ Ալի Շահը՝ արևելեան այդ
տիպիկ դեսպոտը, որին փրկելու համար անդոր գահուցին նոյն
խիւս Լեախովեան կողակները ու ռուս կառավարութեան սար-
քած ինտրիգները: Բռնու խանդավառութեամբ Պարսկաստա-
նում հռչակեցին սահմանադրական կարգը: Մէջիւրը և
էնջումները եռանդով ձեռնարկեցին նոր Պարսկաստանի
վերածնութեան մեծ գործին: Ծանշած և անտեսապէս քայ-
քայլած պարսիկ ժողովուրդը մանկով նոր իրաւակարգերի
շրջանը, սկսեց ազատ շունչ քաշել, սակայն ազատութեան
մեղրածիւր երկար չտուեց: Նոր կարգերի հաստատումը
Պարսկաստանում՝ գալիս էին վտանգելու հարեան երկրների
— Ռուսաստանի, Անգլիայի անտեսական շահերը: Յայտնի է
թէ Պարսկաստանը, իբրև կուլտուրայէս յիտամնաց մի երկիր,
շարունակ ծառայել է վերոյիշեալ երկու երկրների արդիւ-
նաբերութեան գերարտադրութեան սպառման համար որպէս
ընդարձակ մի շուկայ: Պարսկական սահմանադրութիւնը ա-
մենից առաջ եկաւ խանդարելու ռուս և անգլիացի կապիտա-
լիստների քունը, որոնք տեսնելով իրենց շահերի վտանգումը,
ի հարկէ չէին կարող իրենց խաղաղ հանդիսատեսի դերի մէջ
դնել: Եւ ահա սկսեցին կապիտալի շահերի արթուն պաշտ-
պան դիպլոմատիայի ինտրիգները՝ լարւած պարսկական նո-
րածին սահմանադրութեան դէմ: Իրենց թագուն նպատակ-

ների իրագործման համար ռուս-անգլիական էմիսարները ցըր-
ւած երկրի զանազան կողմերը, մեծածեծ խոստովանելով և դրամի
ոյժով սկսեցին ապստամբեցնել այս կամ այն պատերազմաւէր
և թալանի վարժ ցեղերը: Այդպէս հիւսիսում ռուսների դրոյ-
մամբ և աջակցութեամբ ապստամբեցին զարադաշտները, բըր-
դերը, թալիները, թուրքմէները: Իսկ հարաւում անգլիայի
դրոյմամբ զալթացիները, լուերը, և երբ մէջիւրին ու գաւա-
ռական էնջումներին՝ գործ դրւած ահագին ջանքերից յե-
տոյ՝ յաջողեց վերացնել իրենց գործունէութեան դէմ արհես-
տականօրէն յարուցւած այդ խռնությունները, անմիջապէս ռուս-
անգլիական դիպլոմատիայի թելադրութեամբ և հովանաւորու-
թեամբ սկսեցին Մահմադ Ալի և նրա եղբայր Մալար Դով-
լէյի արշաւանքները դէպի Թէհրան: Ռուս կառավարութիւնը
ոչ մի ջանք չը խնայեց ապահովելու Մահմադ Ալիի յաղթա-
նակը, որը կրկին գահ բարձրանալով Պարսկաստանը շահա-
գործելու և թալանելու համար իրեն ընկերակիցներ պիտի
դարձնէր Ռուսաստանին և Անգլիային, բայց երբ այս ևս չի
յաջողեց ու Մահմադ Ալին հանդիպելով ժողովրդի անկուռն
կամքին և բռնու դիմադրութեանը, սախլած եղաւ կորագրուի
կրկին Օդեսա վերադառնալ, ռուս և անգլիական կառավա-
րութիւնները յինելով իրենց 1907 թ. համաձայնութեան վրայ
ձեռնածուի եղան միջամտելու Պարսկաստանի ներքին գործե-
րին և պատրաստ բռնելով իրենց իսկ ձեռքով ստեղծած դէպ-
քերը, զորք մտցրին Պարսկաստան: Սկսեց ուժգին հալածանք
Փիղալների և դէմօկրատների դէմ, որոնց մի մասը արտուրեց
արտասահման, իսկ միւս մասը երկրի ամենախուլ ու հեռա-
ւոր անկիւնները: Լուծեց Մէջիւրը, ինչպէս իսկ յաջողեց
այն ամեն կարգի կեղեքիչները, որոնք կոթնելով առաւելա-
պէս ռուսների պաշտպանութեան վրայ՝ սկսեցին կըր-
կին իրենց շահատակութիւնները: Կամենալով խալաւ բնա-
ջինջ անել յեղափոխական տրամադրութիւնները ժողովրդի մէջ
և ահաբեկել նրան, ռուս կառավարութիւնը իւր ձեռքում
ունենալով Ատրպատականի խոշոր Փեղալներից մէկին —
Սուջայի-Դովլէյին, արհեստական կերպով առաջացրեց Թալի-
րիդի արեւմտեց դէպքերը: Թալիւրը վաղուց նկատուած էր
որպէս պարսկական ազատագրական շարժումների բոյնը,
հնոցը: Պէտք էր վերջ տալ Թալիւրի բնորոտացումներին,
այդտեղ համախմբւած յեղափոխական ոյժերին, և ռուս կա-
ռավարութեան այդ ուղղութեամբ արած ջանքերին միայն
պիտի վերագրել Թալիւրի դեկտեմբերեան դրաման, մի դրամա,
որը հարկւրաւոր զոհեր խեց և առիթ ծառայեց ռուսներին
ահագին գորք անցկացնելով պարսկական հողը, դրաւել գրեթէ
ամբողջ Ատրպատականը: "Խուլալոյոյ" տարրերին պատժելու
համար կանգնեցրին կախաղանները՝ բռնութեան այդ անարգ
գործիքները և սկսեցին գինւորա-գաշտային դատարանների
գործողութիւնները: Առանց քննութեան, առանց որ և է մե-
ղադրական փաստերի տաճնեակներով կախաղան էին հանուած
մարդիկ, որոնց ամբողջ յանցանքը եղել էր այն, որ նրանք
աշխատել էին մի վեհ գաղափարի համար, ցանկացել էին
տեսնել իրենց երկիրը ազատ, իրենց ժողովուրդը անկաշխան
և բարեկեցիկ: Թալիւրում գործող գինւորական դատարանի
գործունէութեանը իբրև իլլիստրացիա կարող է ծառայել հե-
տեալ դէպքը: Հիւպատոսարանից դատարան են բերւած 8
կալանաւորւած պարսիկներ: Հիւպատոսարանը ցուցադրում

Թանձաններով նշանակել էր "յանցաւորները" անունները և առաջարկել էր 1-6-ին կախել իսկ 7-րդ և 8-րդին ազատ արձակել: Ձինւորական դատարանը անմիջապէս կորզողորոճ է առաջին 6 հոգուն կախել, բայց երբ դատարանի նախագահը դուրս է գալիս մահապարտներին տեսնելու, մի ծեր մօլլա մօս է վազում և չորքելով նախագահի առաջ սկսում է բարձրաձայն լալ ու փետել մօրուքը, աղաչելով որ գոնէ վերջին բուսկում ասեն թէ լի՛նչու և ո՞ր յանցանքի համար են իրեն կախում: Նախագահը աղաւաճ այդ տեսարանից և հիպատոսի տւած տեղեկութիւններից իմանալով, որ ծերունի մօլլայի միակ յանցանքը եղել է այն, որ նրա մի հեռաւոր ողջակիւնը իբրև ֆիդայի կուսել է ռուսների դէմ, այնքան "բարեսիրտ" է գտնուում որ N° 3 նշանակւած և մահաւան դատաւարութւած մօլլային ազատ է արձակում և նրան փոխարինում է N° 7-ով:

Ռուսները գրաւելով հիւսիսը, իսկ անդլիայիները հարաւը, սկսեցին դանադան կօնցէսիւնների անւան տակ թալանել երկիրը և բաժանել իրենց մէջ: Վերջ տրեց Պարսկաստանի սահմանադրութեանը, օտարերկրեայ կապիտալիստների շահերը փրկեցին վտանգից, նրանք նորից բացարձակ տէր դարձան Պարսկաստանի տնտեսական կեանքին, հոգ չէր նրանց համար, որ դա տեղի էր ունենում մի ամբողջ ժողովրդի իրաւազրկման և քաղաքական ու անտեսական ճնշման ու քայքայման գնով: Պարսկաստանը այսօր de facto դարձել է ռուս-անդլիական մի նահանգ, այդ երկու երկրների կապիտալիստների համար շահագործման մի ընդարձակ վայր. սակայն այդ բոլորը երբէք չեն կարող ազատութեան մեղրամիւր տալ: Եւ ի՞նչ ժողովրդի մէջ մեւջինել ազատութեան տենեփոխ: Եւ ի՞նչ կը հարկէ իրեն համար ազատութեան ճանապարհը, այն ևս գուցէ ոչ հեռու ապագայում:

Վ. ՄԱՐՍԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՆԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Եթէ երբէք պատերազմը ներկայացած է մի կերպ անխուսափելի հետևանք իրերու բարդ դրութեան, եթէ երբէք հակամարդկային այդ աղէտը, բարբարոսական այդ գործողութիւնը ծառայած է որպէս վերջին միջոց՝ բռնապետական լէժիմներու տապալման և ճնշում ու հարստահարում ժողովուրդներու ձեռքազատութեան, դա Պալքանեան չորս փոքրիկ պետութեանց և Թիւրքիոյ միջև մղւած պատերազմն էր, որ մի քանի շաբաթայ ժամանակամիջոցին, եւրոպական քարտէսի վրայէն ջնջեց Թիւրքիոյ անունը՝ հիմնադրապէս կործանելով նաև թրքական վայրենի լէժիմը, որ հինգ դարերէ ի վեր տապանաբարի մը պէս կը ծանրանար Հարաւային Եւրոպիոյ ազատատենչ ժողովուրդներու ճակատագրին վրայ:

Թիւրքիոյ զինւորական ոյժին վրայ հիացողները մնացին բոլորովին անշարժ: Պալքանեան Դաշնակցութեան տարած փառաւոր յաղթանակներու և թրքական բանակի կրած ջախջախիչ պարտութեան առաջ: Անակնկալի հանդէպ չգտնւեցան, սակայն, անոնք, որոնք մօտէն ծանօթ էին թիւրք պետութեան կողմակերպական խոյտաբղէտ սխառեմին և ա՛յն

ներքին հիւանդութեան, որմէ կը տառապէր նա և զոր բուժելու համար կը վարէր ասիական դանդաղութեամբ: Թիւրքիոյ ապագայով հետաքրքրուող թերթեր շարունակ կը ծառանալէին անոր քաղաքական մարմնոյն վրայ երեցող ակտուսիշերը և՛ անդամահատութենէ խուսափելու համար հիմնական բարենորոգումներով վերակենդանացում կը յանձնարարէին: Բայց սուլթաններու վեհափառ քմբին բնաւ հաճելի չէին՝ առաջ ետն երու՝ մարդկային իրաւունքներու անբռնաբարելիութեան, անոնց քաղաքական ազատութեան, հաւասարութեան և անտեսական վիճակի բարելաւման նման խօսքեր: Նորա բարուր համարեցին իրենց Աստուածպետական իրաւունքներուն վրայ յենելով երկաթէ ձեռքով իշխել, քան թէ լայնածաւալ երկիրը օժտել արդարակոյրով կառավարութեամբ մը: Եւ այսօր, հակառակ՝ Օսմանցիութեան արխանաձեռ խարխուլ շէնքը կանգուն պահելու համար Եւրոպական դիւանագիտութեան թափած զուր ջանքերուն, հակառակ՝ Եւրոպական վաշխառու կապիտալիստներու թրքական ծով կարասի մէջ լեցուցած միլիոններու, Եւրոպայի "Հիւանդ Մարդը" կը մեռնի, խեղդելով իր իսկ ձեռքերով պատրաստած արեան ճահիճներուն մէջ: Մահ — դա՛ է բնական վախճանը բոլոր ա՛յն ազգութիւններուն, որոնք կորսնցուցած են իրենց կենսունակութիւնը, հետեւաբար և՛ դատաւարութւած են պատմութեան թոտերաբեմէն վայր գլորելու՝ տեղի տալով ա՛ւելի թարմ, ա՛ւելի կենսունակ տարրերու:

Պալքանեան պատերազմը անխուսափելի էր: Նա իրերու բնական հետևանքն էր, որ երկար ատենէ ի վեր կը յետաձգէր շնորհիւ մի շարք պայմաններու՝ Քօջանայի և Շիրակի դէպքերը արագացուցին այդ վախճանը: "Սահմանադրական" լէժիմին տակ կատարւած այդ վայրագ ջարդերը յորդեցուցին Պալքանեան Սլավ ազգութեանց համբերութեան բաւարարումը: Եւ ի՞նչ ասարկուել, ի՞նչ Մակեդոնիոյ քրիտոնեայ ժողովրդին վրայ գործադրւած թրքական բարբարոսութեանց ա՛մենէն զարհուրելիներու շնորհիւ: Իրաւքանչիւր տարի մի քանի հազար մակեդոնացիներ կապանուէին, կանայք և մասողաշ օրիորդներ պաշարողուցներու և թիւրք լալիւր պաշտօնեաներու անասնական կրքերուն գոհ կը դառնային, տասնեակ հազարներ կը զաղթէին և անոնց տեղ կը բնակեցնէին մահաճակատներ, "որոնց ձիւ ոտք կոխած գետնի վրայ խոտ չէր բուսներ այլ ևս":

Եւ քսաներորդ լուսաւորեալ դարուն մէջ կատարւած այդ 1էնկթիմուրեան արարքները թրքական դիւանագիտութեան կողմէն կորակւէին որպէս "գաղաղական միջոցներ", որոնց կիրարկութիւնը իբր թէ անխուսափելի կը դառնար Մակեդոնական Կոմիտէներու յեղափոխական գործունէութեանց պատճառաւ: Հարիւր հազարաւոր հայեր ջարդելը նոյնպէս "գաղաղական միջոց" !! մ'էր Հայ կուսակցութեանց յեղափոխական գործունէութեան "առաջը առնելու համար": Եւ միթէ՞ Մակեդոնական և Հայկական կազմակերպութեանց յեղափոխական գործունէութիւնները ինքնին ապացոյցներ չէին թրքական վատթար վարչութեան և անհանդուրժելի լուծին, զորս թօթափելու համար կը դիմէին անոնք միա՛կ և նպատակաշարժար միջոցին — Յեղափոխութեան: Տեսնա՞՞մ է երբէք, որ իր վիճակէն գոհ մնացող ժողովուրդ մը ընդդրկած ըլլայ արեան ճանապարհը:

Աւելի ձեռնհասօրէն խօսելու համար սակայն պէտք է յետադարձ ակնարկ նետել պատմութեան վրայ և քրքրել ներկայ պատերազմին մնունդ տուող պատճառները:

Թիւրքերը, 14-րդ դարուն, Սուլթան Օրխանի առաջնորդութեամբ, առաջին անգամ ոտք կը դնեն Հարաւային Եւրոպիոյ հողին վրայ՝ Կէլիդուէն և հեղահեռէ կը նահաճեն Սերպիան, Պուլկարիան, Յունաստանը, Պօնուֆէրցէքը և Ռումանիան՝ հասնելով մինչև Վիեննայի պարիսպները: Եւ

րոպական հոլին վրայ, սակայն, անոնք կը մնան նոյն բարբարոս և խաւար ասիացիները, առանց որ և է ճիշդ ընելու՝ եւրոպականամայու: Մահճեականութեան վարդապետութիւնը ամենամեծ խոչընդոտներէն մէկն էր թիւրքերուն յառաջադիւծութեան, զարգացման և ծարղկային ազատութեան զաղափարի ըմբռնման համար: Արդարև, այդ վարդապետութիւնը ճակատագրականութիւնը պաշտպանելով՝ կը կաշկանդէր նախաձեռնութեան ոգին: Նա կը թոյլատրէ ստրկութիւնը՝ յաւերժացնելով բռնապետութիւնը: Նա կը գրգռէ ցեղային և կրօնական ատելութիւնները՝ անկարելի դարձնելով քրիստոնեայ և ծաղմտական ազգութիւններու միջև եղբայրութեան և հաւասարութեան գաղափարի իրականացումը: Թիւրքերը մնալով հաւատարիմ մահճեական կրօնքի՝ ամուլ վարդապետութիւններուն և կոթնած բիրտ սլոխն վրայ, դարեր շարունակ կը պահեն իրենց տիրապետողը, հարստահարողի դիրքը, առանց որ և է ընդունակութիւն ցոյց տալու նաճաճ երկիրները կառավարելու նորագոյն պետութեան ճշմնհարմարութեան: Անոնք սկիզբներով տիրապետած էին, սկիզբներով ուղեցին կառավարել և սկիզբներու ծայրերով ալ հետըզհետէ դուրս քշեցան Եւրոպական Թիւրքիայէն: Ազատագրուած էին Ռումանիան, Սերպիան, Յունաստանը և Մօնթենէգրօն: Պօնաֆէրցեքը, Պուլկարիան, Մակեդոնիան, Եպիւրոսը և Թրակիոն դեռ կը հեծէին թիւրքի եսթաղանին տակ մինչև 1875 թականը, երբ նոյն տարւոյ Յուլիս 1-ին, Հերցեգովինայի արիւնաբամ ժողովուրդը չկարողանալով այլևս տոկալ թրքական կաշառակեր պաշտօնեաներու հարստահարութեանց, Նեպոկինովի մէջ, կը պարզէ ապստամբութեան դրօշը և կը բարձրանայ լեռները: Ապստամբութիւնը հսկայական ծաւալ կատանայ, երբ թրքական խոտուածներուն հաւատք ընծայելով քաղաք վերադարձող ժողովուրդը ամբողջօրէն զրկելով ապստամբութեան կը ճղեն և Պօնիացիները:

Թիւրք կառավարութիւնը, ըստ իր սովորութեան, "ապրտամբութիւնը զապելու" պատրաստակին տակ, վայրենաբարոյ պաշտօնողներու և կանոնաւոր բանակի միջոցաւ կը սարքէ անլուր կոտորած մը: Թալանի հոտը և կեաւ ուր կանանց տիրանալու տենչը կանանամացնէ թիւրքը: Եւ քաղաքակիրթ աշխարհը ականատես կըլլայ բռնաբարութեանց, կոտորուած յափշտակութեանց և մորթոտուծի սարսաղղեցիկ տեսարանի մը, որու առաջ եթէ "քրիստոնեայ" Եւրոպան, ապշեցուցիչ սառնասրտութեամբ մը, կը հանդուրժէր անխռով մնալ, սակայն կը յուզուի, կը փոթորկի Պուլկարիան և 1876-ի գարնան կը ծածանեցնէ ապստամբութեան դրօշակը:

Սուլթան Համիտը հարկ կը տեսնէ վերտօլին դիմել իր "գաղղական միջոցներուն": Եւ Հարաւային Եւրոպայի դրախտանման վայրերը սպանդանոցի կը վերածուին՝ սրախողխողաւ հաղարաւոր պուլկարիներու դիակներով: Թրքական գաղանաբարոյութիւնն ու նենգամտութիւնը ձեռք ձեռքի տուած կը գործեն: Միայն Պաթաղի մէջ կը փողոտին 5000 պուլկար ողաճարդիկ, ինչպէս նաև բոլոր կանայք, առանց տարիքի խտրութեան, անկարագրելի եղանակներով բռնաբարուէն յետոյ: Եւ թիւրք հրամանատարը իր զօհերը զինաթափ ընելէ առաջ "ազնիւ խօսք էր տուած" անոնց մէկ մազին անգամ չը դաշել: Այս դէպքին վրայ ցասման հուժկու հոտանք մը կանցնի Սլավոնական աշխարհի մէկ ծայրէն միւսը և նոյն տարւոյ Յուլիս 2-ին, փոքրիկ, այլ քաջարի Մօնթենէգրօն պատերազմ կը յայտարարէ Թիւրքիոյ դէմ՝ յանուն իր նահատակուող սլավ եղբայրներու ազատագրութեան: Դրոշմ իր արեւելեան շահերէն, Ռուսաստանն ալ պատերազմ կը յայտարարէ Թիւրքիոյ դէմ: Թիւրքիան կը պարտուի և Ս. Սթէֆանօյի Մարտ 3-ի դաշնագրութեամբ ազատ կը հռչակուին Պուլկա-

րիան, Արևելեան Ռումելիան և Մակեդոնիան: Դժբաղդաբար վերջինի ազատագրութեան մեղրալուսինը եղաւ շատ կարճատև: 1878 Յուլիս 13-ի Պէրլինի Դաշնագրութեամբ Արևելեան Ռումելիան անջատուեցաւ Պուլկարիայէն, Պօնաֆէրցեքը լուծը փոխելով "ժամանակաւորապէս" անցաւ Աւստրօ-Հունգարիոյ հովանաւորութեան տակ, իսկ Մակեդոնիան յանձնուեցաւ իր դահճապետին՝ Թիւրքի ձեռքը: Պէրլինի Դաշնագրութիւնը իր 23-րդ հոչակաւոր յօդաւածով Մակեդոնիոյ համար "կը խոստանար" բարենորոգումներ միայն, որոնք, սակայն, 61-րդ յօդաւածով Հայաստանի համար "խոստացւած" բարենորոգումներու նման դատապարտած էին ամբողջութեան, քանի որ զանոնք գործադրողը պիտի ըլլար ինքը, Եւրոպայի՝ իսկ ձեռքով, բարենորոգելու կարօտ թիւրքը: Այսպէս, ուրեմն, միևնոյն լեզուն խօսող, միևնոյն կրօնքը դաւանող և միևնոյն ազգային խտեանները սնուցանող ժողովուրդները բաժնուեցան երկու մասի, մին՝ իր անկախութեան տիրացած կըմբռնուէր ազատութեան բարիքները, իսկ միւսը՝ կրկին շղթայաւոր բռնապետութեան լծին՝ կը վերսկսէր իր ստրկական անտանելի կեանքը:

Եւ այդ կեանքը շարունակուեցաւ 34 տարի ևս:

Սուլթան Համիտը՝ քաջալերած Ռուսիոյ և Աւստրօ-Հունգարիոյ Պալքանի մէջ ձգած հակընդդէմ քաղաքական պայքարէն, աւելի ու աւելի կը սղմէր պառտաւոր: Թիւրքական ծոյլ ոստիկանները ի հաշիւ մակեդոնացիներու փարթամ և զեղի կեանք կը վարէին գլուղերուն մէջ: Կեանքի, ինչքի և պատուի ապահովութիւն գոյութիւն չունէին բնաւ: Թիւրքական դատարաններու պործողութիւնները դառն հեղինակէն արդարութեան գաղափարի դէմ: Այնտեղ թագաւորողը ճէրիաթն էր միայն: Թիւրք ֆէօդալներու ստեղծած սուրխալի դրութիւնը այնքան ծայրայեղութեան կը տարւէր, որ Մակեդոնիոյ պուլկարները ուղղակի յուսահատուածաւ մատնուէին իրենց թագաւորին: Եւ Թիւրքիոյ իր միայնակի, բայց սխառեմադրիկ ջարդը: Զարի, այդ էր Սուլթան Համիտի քաղաքականութեան ալիքան և օմէղան՝ միանգամ ընդմիշտ լուծելու համար Մակեդոնական հարցը, որը հետզհետէ այնքան սուր կերպարանք կատանար, որ նոյն իսկ Ռուսիան և Աւստրօ-Հունգարիան ստիպուած եղան 1903 Հոկտեմբեր 30-ին, Միւրցդէքի ծրագրով "բարենորոգումներ" մտցնել Մակեդոնիոյ մէջ՝ ժանդարմէրիան վերակազմելով Եւրոպական օֆիցերներու հրամանատարութեան տակ: Բայց Սուլթանի գերիշխանութիւնը տակաւին կիմար կանգուն, որով այդ ծրագիրն ալ Պէրլինի Դոնկրէսի 23-րդ յօդաւածի նման, իբրև անպէտք թուղթ, նետուեցաւ դիպլոմատական զամբիւղին մէջ և Եւրոպայի օֆիցերները ականաւ զլաններ եղան իրենց իսկ աչքին առջև շարունակող բռնաբարութեանց և հարստահարութեանց:

Ողբալի էր Մակեդոնիոյ վիճակը:

Խորամանկ Սուլթան Համիտը "բաժանեալ զի տիրեցես" ի քաղաքականութեամբ, կրօնական և ցեղային ատելութեան ոգին կը հրահրէր Մակեդոնիոյ քրիստոնեայ ազգութեանց միջև: Այսպէս, պուլկարները՝ յոյներուն դէմ, սերպերը՝ պուլկարներուն դէմ բուռն պայքար կը մղէին, որ յաճախ կը վերջանար արեւմտի ընդհարումներով ի հրճման կարծիք աղւեսի, որը քաջ ըմբռնած էր թէ՛ այն օրը, երբ Պալքանեան ազգութիւնները դաշնակցին, նոյն օրը պիտի հնչէ Եւրոպական Թիւրքիոյ մահազանգը:

Մակեդոնիոյ արիւնակաթ երկնակամարին վրայ կուտակուած ճաշկանկարը հետզհետէ կը մթաղանացնէին ամբողջ Պալքանեան հորիզոնը: Հոգեւոր Մակեդոնիոյ վիճակը ծանրօրէն կազդէր Պուլկարիոյ ներքին և արտաքին քաղաքականութեան վրայ: Պուլկարիա ապաստանած ժողովուրդապէս կէս միլիօն մակեդոնացիներու ներկայութիւնը կը յիշեցնէր ազատ

պալիարացիներուն իրենց մի բանի տաննակ տարիներ առաջւայ համանման դրութիւնը: Պալիարական բանակի օֆիցէրներէն մեծ մասը մակեդոնացիներ էին, որոնցմէ շատեր յեղափոխական խմբերու հետ, իբրև կամաւորներ, Մակեդոնիա կարշաւէին իրենց արեան գնով ամսքելու մակեդոնացիներու կայսրիւնը: Անպակաս էին և՛ թրքօպուկարական սահմանազնային ընդհարումները, որոնք երբեմն մի բանի օր կը տեւէին և կը դադարէին այն ատեն միայն, երբ երկու պետութեանց պատերազմական նախարարները կտրուկ հրահանգներ կը դրկէին:

Պալիարիան կզգար որ պատերազմը թիւրքիոյ հետ անխուսափելի պիտի դառնար, ուստի կը պատրաստուէր այդ անխուսափելիութեան համար: Պալիարները՝ բոցալուռած Մակեդոնիոյ ազատութեան անշէջ կրակով, առանց դժգոհութեան որ և է մրմունջի, կը տանէին իրենց ուսին վրայ տարւէ տարի աւելացող պատերազմական ծանրամանր տուրքերը: Պալիարիան ազատութեան արևու կենսատու ճառագայթներու պարզեամբ ջերմութեան շնորհիւ վերակազդուրած, հզօրացած, երիտասարդ և կորովի ազգ մը դարձած էր, հետևաբար պուկարները իրենց համար, իրենց երկրի և իրենց եղբայրներու շահերուն համար սրբազան պարտականութիւն կը համարէին Մակեդոնիոյ ազատագրութեան գործը:

Մինչ Պալիարիան անընդհատ կը պատրաստուէր այդ ճակատագրական օրան համար, եւրոպայի բաղադրական կեանքին մէջ տեղի կունենային մեծ փոփոխութիւններ:

Պատմական երկու մեծ թշնամի պետութիւններ՝ Անգլիա և Ռուսիա բարեկամութեան և սիրոյ խօսքեր կը փոխանակէին: Անգլիա, որ Պէրլինի Գոնկրէսին մէջ Աստրօ-Հունգարիոյ հետ միասին մերկացուցած էր Ռուսիան իր յաղթութեան դափնիներէն և որուն կը պարտէր բոլորած Մակեդոնիան իր վերապրած 34 տարւայ ծարիրոտական կեանքէն, և հետեւեալ ընթացքով Ռուսիոյ հետ համաձայնելով կը ճակատէր Աստրօ-Հունգարիոյ դէմ, որովհետև մէկ կողմէն՝ Մայրաքաղաք Մոսկուի մէջ Ռուսաստանի կրած պարտութենէն յետոյ Հրկուկաստանի վրայ ուստական արշաւանքի մը վտանգը այլևս չէր սարսափեցներ Մեծն Բրիտանիան, իսկ միւս կողմէն՝ Ծովերու Թագուհւոյն բնու ցանկալի չէր գերմանական նաւային զօրութեան մինչև Մայոնիկի դրան առաջ հանիլը: Եւ անկախ Մակեդոնիա մը միայն պիտի կրնար Աստրիական յառաջխաղացման առաջ թուր կանգնել: Անգլիոյ այդ ծրագիրը կը համապատասխանէր ռուսական շահերուն: Գերմանիոյ աշակերտող թիւրքիոյ եւրոպական նահանգներուն սլափներու ձեռք անցնելով, ուրեմն, պիտի աւելնար ռուսական ազդեցութիւնը և պիտի վերջ գտնէր Պալիարեան փոքրիկ պետութիւններու վրայ սառնաւոր աւտորիական հեղեմնիւն: Շահերու համանմանութիւնը իրար կը ձօնեցնէ երկու մեծ ախոյեանները և այդ մերձեցումէն կը մնի Անկլօ-Ռուսական համաձայնութիւնը: Ռեպլի մէջ տեղի կունենայ Էտաւրտէի և Նիկոյա Բ-ի տեսակցութիւնը, որու միջոցին երկու վեհապետներու մէջ կատարեալ համաձայնութիւն կը գոյանայ Մակեդոնիոյ անկախութեան նկատմամբ:

1908-ի զինուորական ապստամբութիւնը և Միաշաթեան Սահմանադրութեան անսպասելիօրէն վերհրատարակութիւնը կը կանխեն Ռեպլի ծրագրի գործադրութիւնը:

Թիւրքիան "սահմանադրական" էր եղած:

(Շարունակելի) Բ. ՎԱՐԱՉԴԱՏ.

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ԵՒ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հատուածներ Le Tempsի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԻՆ» ԳԻՐԸ. վերնագրով խմբագրականէն.—

"Հայաստանի Խնդիր գոյութիւն չունի, բայց մենք պատճառ պիտի ըլլանք անոր ստեղծելուն" կրէր բարձրատիճան թիւրք պաշտօնեայ մը, 1892-ին: Թէ ինչպէս թիւրքիա ստեղծեց զայն՝ ամենքին յայտնի է: Հայ ազգը իր վիճակի մասին անգիտակ էր նոյն իսկ Պէրլինի Գոնկրէսէն վերջը, որուն 61-րդ յօդաւոր կը շահագործէր եւրոպան՝ Հայաստանի կայսրութեան բարոյքմամբ: Հայ ժողովուրդը ուրիշ բան չէր ցանկար, եթէ ոչ օրինաւոր վարչութիւն մը Օսմանեան գերիշխանութեան տակ: Թիւրքական կոտորածներն են, որ զարթեցնելին ազգային այդ ինքնագիտակցութիւնը: Թիւրքերու և քիւրտերու ամեն տեսակ հարստահարութիւններն են, որ մունդ ուին հայ կոմիտէներուն, որոնց կեդրոնը եղաւ Լօնսոն՝ Անգլիոյ կողմէն ցոյց տուած գործնական համակրութեան պատճառաւ: Թիւրքիան սխտէճատիրօրէն գրգռելով իր հրպատակներէն ամենէն խաղաղասէրները, յեղափոխական մղեց զանոնք, և այդ յեղափոխական մէջ փնտռեց պատրուակը իր կատարած աճեալբարբարոս հեկատոմբին, որուն յիշատակը կը պահէ պատմութիւնը 1893-1897-ի մեծ տաքնապի էր, որ իր լուծումը գտաւ "բարենորոգումներու ծրագրի" ընդունելութեամբ:

Անկէ ի վեր ընդհանուր կոտորածները չեն վերականգնել բայց հարստահարութիւնները դադրած չեն բնաւ: Մասաչական սպանութիւններ չէին կրնար գործել այլևս, բայց շարունակած են մասնակի սպանութիւնները: Պետութեանց կողմէն նախագծւած բարենորոգումներն ալ որ և է արդիւնք չի տւին: Հայերը դարձեալ սկսան յոյսեր տածել 1908-ին, երբ վերահաստատուեցաւ սահմանադրութիւնը: Ասանաջի ջարդը սակայն, հասկցուց անոնց, որ օրէնքները չեն կարող փոխել բարբերը: Վերջին ամիսները հայոց գոյութիւնը ուղղակի սնտանելի եղած է: Անոնք բողոքած են, բայց ի զուր—ի զուր մինչև այն ատիճան, որ սեպտեմբեր 12-ին, Կ. Պօլսոյ Հայոց Արշարունի Պատրիարքը իր հրաժարականը տալով՝ խնդրեց Կաթողիկոս Գեորգ Ե-էն, որ եւրոպայի աշակցութիւնը հայցէ ի նպաստ հայ գահերուն: Անկէ ի վեր Ռուսիան, որուն բազմաթիւ հայ հպատակներ ունենալու հանգամանքը ճանաւոր պարտականութիւն կը դնէր իր վրայ՝ թրքահայերու պաշտպանութեան համար, դիւանագիտական միջամտութիւն ըրաւ: Բ. Դուռը, ըստ իր սովորութեան, պատասխանեց թէ՛ ինքը արդէն յանձնախուժեց մը պիտի նշանակէր և Բարենորոգումներու Մշակչի մը մշակչը: Կ. Պօլսոյ մէջ այդպիսի միջոյններով է, որ միշտ կը կանխեն եւրոպական միջամտութիւնները: Եւրոպան փորձով գիտէ թէ՛ ի՞նչ արժէք ունին այդպիսի նախաձեռնութիւնները:

Հայերը շատ պատճառներ ունին դեռ սկստակ ըլլալու: Անոնք գիտեն, որ 1895-ին ալ նշանակւած էր յանձնախուժեց մը, որը մինչև անգամ Հայաստան գացած էր քննութեան համար: Հայերը կը յիշեն, որ թիւրք կառավարութիւնը այնուհետև ընդունեց վեց դեպքաններու ներկայացուցած բեֆօրմներու ծրագիրը: Անոնք կը յիշեն, որ փոխանակ բեֆօրմներ ստանալու, ջարդեցան, և ջարդը տեղի ունեցաւ ճիշդ այն վայրերուն մէջ, ուրկէ անցած էր յանձնախուժեց մը:

Այսպիսի պայմաններու տակ ինչպէս կարելի է զարմանալ, որ Հայոց Պատրիարքը ճերժած է թիւրք կառավարութեան առաջարկը: Ինչպէս զարմանալ, որ 1895-ին Անգլիոյ, Փրանսայի և Ռուսիոյ կողմէն ծշակամ ծրագիրը զոհացուցիչ չեն գտնել: Ինչպէս զարմանալ, որ այդ ծրագրին, որպէս լրացուցիչ անհրաժեշտութիւն, կը պահանջեն եւրոպական վերահսկողութիւն, առանց որու ընթացիւնները երբեք չպիտի դորձադրին:

... Ուրեմն, անօգուտ պիտի ըլլար այսօր դարձեալ խօսիլ ընթացիւններու մասին, առանց եւրոպական վերահսկողութեան: Ոչ ոք պիտի հաստատար այդպիսի ընթացիւններուն եւ թիւրքիան պէտք է լաւ խմացած ըլլայ այդ: Եթէ ներկայ պարագաներուն կոտորածները վերսկսին Հայաստանի մէջ, այդ երկիրը կորած է իրեն համար: Իր իսկ շահը, ուրեմն, կը թելադրէ իրեն անկեղծ բարեկրօններու քաղաքականութիւնը՝ Եւրոպայի աջակցութեամբ: Նոր ձգձգումները պիտի առաջնորդեն աղետի մը, որու առաջին զոհը պիտի ըլլայ ինքը՝ Թիւրքիան:

Հաւատանք՝ La Patrie թերթի մէջ լոյս տեսած Հանրի Ռօշֆօրի խմբագրականներէն:—

Երկիր մը որ իր զբաղուածութիւններով հռչակ ստացած է, որուն վրայ թիւրք խողովակներն իրենց վայրագութիւնները մասնաւոր կերպով փորձած լինելուն Ապուլ-Համիտ ներկայ ժամանակներուս ամենամեծ մարդասպանի տիազօսին արժանացաւ: Կլատուրնէն, և որուն վրայ այլեւ գրեթէ չի խօսուիր, այդ Հայաստանն է: Այդ զբաղող երկիրը ժամանակին բաժնւած է Ռուսաստանի, Պարսկաստանի և Թիւրքիոյ միջև: Բայց եթէ Հայերը խաղաղ կեանք մը վարած են ուսման եւ պարսկներու լուծին տակ, անոնք աւելի քան ուրիշ ժողովուրդներ, զոհերն եղած են օսմանցիներուն: Թիւրքին համար Հայ մը խողովակը հրճալի ժամանց մ'էր: Նախկին սուլթանի օրով կոտորուածներու թիւը երբեք հարիւր հազարէն աւելի եղաւ, իսկ անոր յաջորդին զահակաւորմէն ի վեր չեմ նկատեր թէ կոտորածները զգալի կերպով մեղմացած են:

Կովկասի հարաւային կողմը գտնուելով, Հայաստան Պալքանեան ձիւթեան մաս չի կազմեր: Բայց իր աշխարհագրական դիրքն զինքը նուազ հետաքրքրական չի դարձներ, քան իր ստուապանքի ու հայածանքի միւս եղբայրները: Աւելի քան ստիպողական է Հայաստանը թիւրքերու ձեռքէն ազատել, որովհետեւ յոյներու, պոլկարներու, սերպերու և ծովափնէի լեռնայիններու յաղթութիւնները Ասիա պիտի քշեն այդ ոճրագործները՝ որոնք պիտի յարձակին հայ ժողովրդին վրայ և անոնց սուղի պիտի նստեցնեն իրենց կրած պարտութիւնները:

Ինչ անկարելի կը թուի որ յաղթականները, որ այնչափ տառապած են մահմետականներու վայրագութիւններէն, իրենք զիրենք փրկելէ յետոյ չի փրկեն նաեւ Հայաստանը: Ես, բռնակամբար, զուելի եւրոպային չէ որ կը դիմեմ: Ժպտուն դէմքով ան քաջաբեկ ահուելի Համիտն իր ոճրագործութեան մէջ, և եթէ Թիւրքիան յաղթական հանդիսանար այսօր, ան, ինքզինք քրիստոնէայ հռչակելով հանդերձ, պաղարկուածութեամբ հանդիսատես կ'լինէր չարաբանքի սաստկութեան մը, զոր մահմետականները հաճոյքով պիտի կատարէին քրիստոնէաներու վրայ: Պալքանեան բանակներուն կ'իյնայ Հայաստանին օգուտ մը բերել իրենց յաղթութիւններէն:

Լալիքը, կին բռնաբարող և երեսաններու փոր ճեղքող թիւրքը պէտք չէ յուսայ նահանջի որ և է վայր մը: Բնաջնդոյներուն կարգը եկած է բնաջնդ լինելու՝ յանուն քաղաքակրթութեան և ժողովուրդներու անդորրութեան: Ասանց և

Մուլաի-Հաֆիտի վայրի անասուններու մէջ որ և է սարքերութիւն մը չկայ:

... Սակայն ինչ բոլորովին անկարելի կը թուի որ Յունաստանի թագաւորին, Պուլկարիոյ ցարին և Սերպիոյ թագաւորին պէս մարդիկ, որոնք գրեթէ Փրանսայիներ են, չարաբանքի և ամենատուկալի գերութեան մէջ թողուն ազդ մը, զոր կրնան, իրենց փայլուն յաղթականներէն հետոյ, զիւրութեամբ խել զահիճներու ձեռքէն: Ես չեմ խօսիր Եւրոպայի մասին, որուն հասարկութիւնն անպատու է, և որը, Թիւրքիայի մէջ դրամական շահեր ունենալուն, Ապուլ-Համիտի հետ լաւագոյն յարաբերութիւններ կը մշակէր և սիրաբաւի սրտով կը սեղմէր անոր արեւնաթաթախ ձեռքը: Մեծ պետութիւններու անարգութիւնն իրենց արկունքն է, և բան մը չի կրնար գտնուիլ քարձրացնել իրենց ստորութեանէն:

Բայց արդեօք, Պալքանեան քաջամարտիկ ազգերը, որոնց հերոսութիւնը, այս միջոցիս, աշխարհ կը սքանչացնէ, իրենց ազատագրումի գիծութեան մէջէն զթուլեան ակնարկ մը չի պիտի՝ ձգեն իրենց եղբայրներուն վրայ որ աւելի հալածւած են քան որչափ չէին իրենք:

Անտարակոյս, ինչ որ պիտի կատարուի այդ անբաղ և գեղեցիկ երկրին մէջ սարսափելի պիտի լինի: Արեւը հոն պիտի հասի ինչպէս երբեք: Որովհետեւ եթէ, համետեան ընթացի անկումէն յետոյ, հաւատք ընծայեցաւ մարդերու, կիներու և չափահաս աղջիկներու կեանքին աւելի յարգ ընծայող Թիւրքիայի մը, այսօր սակայն աշխարհը բոլորովին յուսախաբւած է: Նոր կառավարութիւնը կոտորողները քաջալերելն գտաւ ուրիշ բան չէ ըրած: Այժմ առաջնութեւն աւելի գէշ է:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԵՆ.

Այժմ Պօլիս մի կատարեալ խառնարան է: Դեռ քաղաքական փոթորիկները չ'անցան իր վրայէն: Ամէն ոք ակնապիշ դէպ Լոնտօն կը նայի, Թիւրքիոյ թէ՛ յառաջդիմութեան և թէ՛ անկման ցանկացողը:

Ժողովուրդը՝ որ մի քանի օր առաջ մահմետական մոլեռանդ մասսայի և Չաթալճայի մէջ ենթադրեալ պարտութենէն վերադարձող վրիժառու թիւրք զօրքի բարբարոս յարձակման սպառնալիքին տակ կ'զգար ինքզինքը, այժմ գրեթէ անտարբեր ըլլալու չափ հոնգարտ է:

Այս մի քանի օր սակայն կայսրութիւնը կնճռոտած կը թուի՝ հաշտութեան բանաձեւացնելու անհամաձայնութեան պատճառով: Ժողովուրդը պահ մը յուզեցաւ նորէն՝ պատեւրագմի վերսկսումէն պատահելիք նորանոր դէպքերու վախին տակ: Չնչին դէպքերէ ցնցուող և աննշմար իրականութիւնները անհամեմատ կարեւորութեան և մեծութեան հասցնող Պօլսոյ բնակչութիւնը կ'ալիկոծի շատ անգամ բոլորովին իզուր, վտանգաւոր սակայն քաղաքական կեանքի համար, քանի որ շարժումները կ'ազդեն շրջանակներու վրայ, տալով զրականի հետ միատեղ յաճախ բացասական հետևանք:

Ուր մնաց երէկ պատերազմի գոչիւններով և հիւպատոսարաններու ապակիներու շիկորոցներով օդը լցնող հսկայ զանգւածը: Կամաւորներու զուգորդով սպառնացող ամբոխը, այժմ հասարակ ճշոյց մ'իսկ չի՝ բարձրացնել: Ու նոյն իսկ

այն պատմական օրերուն, երբ Դաշնակցներու յաղթական բանակը անսպասելի արագութեամբ ծր Պօլսոյ գոտիներուն առաջը հասաւ, այդ յեղեղուն, ճիւղն ու նապաստակի բաշտութեամբ զինւած ժողովուրդը ինքնապաշտպանութեան ամենահասարակ փորձ մ'իսկ չբռաւ: Նա պոռոտ է երբ վտանգը իրմէ հեռու է, իսկ լուռ ու անկենդան՝ երբ սուրը վզին կը դնեն: Ահա բռնապետութեամբ սնող ու սնուարծ սահմանադրական շրջան անցնող Պօլսեցին:

Պօլս, Թիւրքիոյ եւրոպական քաղաքակրթութեան վառարանը, քաղաքական կուսակցութիւնները ծնող ու ապրեցնող, Իթիհասն ու Իթիլաֆը իրար դէմ հանող այս քաղաքը, ո՛չ մէկ ջիւղ, գիտակցութեան ո՛չ մէկ արտայայտութիւն ունեցաւ ու սրտի կատարեալ անխուլութեամբ սպասեց ճակատագրական վախճանին:

Այս իսկ զօրեղ փաստ չէ՞ միթէ այն մեղի, շահախնդիր ու կեղծ ազգայնականութեան՝ որու ճարմնացած ներկայացուցիչը ու անյոյրտող պաշտպանն ըլլալ կը թւեր Իթիհասն ու Իթիլաֆը կուսակցութիւնը: Զորս սահմանադրական տարիներուն՝ այդ ողբալի անցեալ ունեցող կուսակցութիւնը, որն յոյսերով ժողովուրդը օրօրելէ, յոխորտ ազգայնականութեամբ զայն յառաջադիմութենէ յետ պահելէ և իսլամական մութնաւորութեամբ գրգռելէ զատ ոչինչ չբռաւ, երբ նոյն իսկ Պօլսոյ զարգացած կեդրոնը մեռնելու ձօտ ելող կենդանիի մը հասարակ ինքնապաշտպանութեան ժեթմն իսկ չունեցաւ: Այս ուր կը մնան աղղ, հայրենիք, քաղաքակրթութիւն բառերը՝ որոնք այնքա՛ն յեղեղեցան այս շրջանին: Թիւրք ազգայնականը իր բովանդակ տխրեղ մերկութեամբը մէջտեղ ելաւ: Նա պատասխանատու է պատմութեան առաջ:

Այժմ սակայն, երբ մէկ կողմէ հաշտութիւնը իր անորոշ բանակցութիւններովը կախման մէջ կը պահէ եւրոպայի հետ նաև Թիւրքիան, երբ զրդրալի ճարձատիւնով մը փլան հին դեռակները ու փշրեցան փայլուն բայց փշրած կուսակցութիւնը, երբ եւրոպական Թիւրքիան անյետադարձալի վիճակի մը մէջ, կը յուզւի միայն Ասիական Թիւրքիան բարեկարգելու, վերանորոգելու կնճռոտ ըլլալու չափ կենսական հարցը, և երբ Արևելեան Խնդրի հետ հրապարակ դրած է նաև Թիւրքիոյ ազգութիւններու փոխ-յարաբերութիւններու բարդ հարցին լուծումն ու ճշմարիտ կարգադրութիւնը, իր դադող բայերով մէջտեղ ինկած է և Երոպական Կառնալիսիոյ ձգտող Թիւրքը մտաւորականներու խմբակ մը, ղեկավարութեամբ լուծւած Իթիլաֆի ներկայացուցիչներէն Լութֆի Ֆիքրիին: Խրճալի տեսակէտը շատ ճիշդ է, եթէ Թիւրքիան չ'եւրոպականանայ, անպայման դատապարտւած է մահանալու: Անոր ներկայի կիսամահ գոյութիւնը աւելի քան վտանգաւոր է քաղաքակրթութեան յառաջադիմութեան:

Զարմանալի է Թիւրք մտաւորականներու մտայնութիւնը: Ամբողջ տեղական ու եւրոպական մամուլը կ'ըբաղի Թիւրքիոյ բարենորոգման խիստ կենսական հարցով, իսկ Թիւրք մամուլի յայտնի ներկայացուցիչները, որոշ բացառութեամբ, կը պնդեն թէ դեռ բարենորոգումներու ժամանակը չէ, նախ ինքզինքնիս ազատեք սա պատերազմէն ու ապա մտածեք: Միթէ՞ ասկէ աւելի յարմար ժամանակ կարող է լինել բարենորոգումները զործարկելու համար ատոնց յապաղումը և ձգձգումը չէ՞ր միթէ, որ երկիրը այս վիճակին: Հասցուց: Ո՛չ ոք կարող է ուրանալ թէ՛ պատերազմի արդիւնքը պէտք է վճել ու սակայն հէնց այդ վճիռին հետ զուգընթաց պէտք է լինի նաև բարենորոգումներու վճումը: Բարենորոգում ըստքը ի՛նչ ժամանակ ալ գործադրի, դարձեալ օգտակար է, քանի որ այդ միջոցով միայն Թիւրքիան կրնայ փրկուի: Ու յետագային այս քաղաքականութեան ախուր հերոսները դարձեալ Իթիհասականներն են: Իրենց մանուկ քաղաքականութեամբ 4 տարի շարունակ հետապնդեցին ազգայնա-

կան, հալածող, յետադէմ, հակասահմանադրական ուղղութիւն մը, պատրաստեցին ներկայ պատերազմը, դեռ վերջին օրերը՝ պատերազմ կուզենք՝ աղաղակեցին ու այժմ ալ՝ բարենորոգումներու ժամանակը չէ՛ կը պոռան:

Այժմ շատ կը խօսուի հայկական բարենորոգումներու մասին Պապը-Ալի մի քանի հայ "երեւելիներ" կանչեց խորհրդակցելու այդ հարցի շուրջ: Իսկ երէկ ալ թրքահայ Ազգ. Ժողովը միաձայնութեամբ վստահութիւն յայտնեց վարչութեան հետապնդելու համար գործնական և վստահելի բարենորոգում: Վարչութիւնը չ'ուզեր յայտնել թէ՛ ի՛նչ կը հասկնայ գործնական բարենորոգումէն, անյարմար նկատելով այդ մասին որոշ պաշտօնական յայտարարութիւն մը, սակայն կը խոստանայ ժողովը տեղեակ պահել անյուշարձերէն:

Պօլսոյ հայութիւնը շատ կը հետաքրքրւի այժմ Հայաստանի բարենորոգումներով: Նոյն հետաքրքրութիւնը ամեն տեղ է, հայկական ամբողջ շրջանակները կ'անւած են այդ հարցով: Պատիրարկութիւններու մասին շատ կը խօսուի: Տեղ տեղ ժողովուրդը շատ միաձայնութեան կ'երթայ, կարծելով որ անհաստատ անձնական յարաբերութիւններ, տեսակցութիւններ կարող են ամեն ինչ վեր ի վայր շրջել ու եւրոպական տիրապետիւն ուղղութիւն տալ: Տեսակցութիւնները կարող են այն ժամանակ միայն իրական արդիւնք տալ, երբ եւրոպական շահերը կը պահանջեն: Անշուշտ մենք ալ պարտաւոր ենք մեր դատը պաշտպանել, առաջնորդելով սակայն Հայաստանի մէջ արդիւնաբերող դատակարգի շահովը: Անտեղի սգեւորութեան հարկ չկայ, այլ առաւելագէտ քաղաքական հոսանքներ և հարկաւոր:

Ծատ դարձանալի է նաև այն պարագան որ, Ազգային Ժողովը՝ Օրմանեանի կաթողիկոսի հետ միասին կ'ընեն համար անպարտ արձակեց: Նա խօսք չունիմ այդ եկեղեցականի մեղաւոր կամ անմեղ լինելուն մասին, որովհետև մօտէն իրադէկ չեմ դէպքերուն: Նա սակայն արդեօք միշտ մենք կ'ընենք անորով պիտի ներկայանանք և կամ միթէ՞ Օրմանեանն է միակ ներկայանալի անձը: Յամենայն դէպս կ'ընեն չէ հայ ժողովրդի ներկայացուցիչը և անոր միջոցով չէ, որ Հայկական Խնդրը կարող է յառաջ մղուի:

4 Յունիս 1913

ՎԱՆԻԿ.

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ.

Զորքորդ Պետական Դուռնայի պատգամաւորական ընտրութիւնները մեղանում կատարեցին միևնոյն ժայր աստիճան վրդովեցուցիչ պայմաններում, ինչ որ համայն Ռուսաստանում: Ցեղական իշխանութիւնները ամեն կերպ աշխատեցին ապահովելու աջակողմեան պատգամաւորների ընտրութիւնը: Այդ նպատակը իրագործելու համար, շարժման մէջ դրեց ամբողջ աջակողմեան բանակը, որի ղեկավարի պաշտօնը այս անգամ ստանձնեց հոգեւորականութիւնը: Վերսկսեց կուսակառուցական նպատակով, վաղուց ի վեր դադարած "Րուսկայեա Պրովդա" Թերթի հրատարակութիւնը "Րուսկիյ Պատրիոտ" անուն տակ. տեղի ունեցան մի շարք սև հարկաւակային նախընտրական ժողովներ. բայց երբ ընդլիմադիր տարրերը ևս ուղեցին կազմակերպել նախընտրական ժողովներ, իշխանութիւնը ամեն տեսակ արգելքներ յարուցեց և մի երկու անյաջող փորձերից յետոյ ընդլիմադիրները ստիպւած եղան նորից դիմել անդեպ միջոցների: Ինչպէս յայտնի է, յունիս 3-ի օրէնքով բանտրութեան և առհասակ դէժոկրատ տարրերի մասնակցութիւնը Դուռնայի ընտրութիւններում գրեթէ ֆիկցիայի է

Հասցրած, այդ իսկ պատճառով վերջին Պետական Դռնաշի ընտրությունները այստեղի բանտարկության համար գրեթե անհրկառուցիկ անցան: Բաղադրի կողմից ընտրելիք պատգամաւորի համար անաջարկում էին երկու թեկնածուներ կապեաների կողմից երրորդ Դռնաշի անդամ Վ. Ա. Վենեգրատովը, որը ամենից շատ շաներ ուներ ընտրելու և ուղղակի թեկնածուների կողմից Բժ. Նարիմանովը: Վերջին թեկնածուները պետք է թիրմացու թեան արդիւնք համարել, որովհետեւ Նարիմանովը ծի ուղղափառ պանիստանտ է և շատ հեռու է Ս. Դ. լինելուց: Հակառակ ձեռք բոլոր առարկություններին, ձեռք ընկերները շարունակեցին պաշտպանել Նարիմանովի թեկնածությունը և միայն վերջը նրանք հիստթափեցին երբ Նարիմանովը հրապարակով յայտնեց որ ինքը պրոգրեսիստ է: Հակառակ կառավարության բոլոր ջանքերին, Աստրախանի կողմից Չորրորդ Պետական Դռնաշի անդամ ընտրեց ձայների ճիշտ ճեմամասնութեամբ ասհմա-նադիր ուսմակալների թեկնածու Վինոգրատովը, իսկ նա-հանգի կողմից Ֆրանգուլեանը, որը պատկանում է հակոտե-բերեանների կուսակցությանը:

25 Դեկտ. 1912

Լ.Ս. ԴԻ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՂԴ

Ի նկատի ունենալով, որ վերջին տարիների ընթացքում «Հնչակ» հրատարակությունը, անկախ պատճառներով, եղել է անկանոն, որը միշտ զժողովուրդների առիթ է տուել թէ՛ մեր շարքերին և թէ՛ ընթերցող հասարակության, ներկայիս զայն ենք յայտարարելու, որ շնորհիւ ձեռք առնում մի շարք միջոցների, «Հնչակ» այսուհետեւ պիտի հրատարակի կանոնաւոր կերպով, ամիսը մի անգամ, բաղկացած առնուաթն 16 էջերից:

Ուրախութեամբ յայտնում ենք, որ ընկեր Ա. Նա-ղարբէկը վերստանաւել է «Հնչակ»-ը լրագրութեան անդամի պաշտօնը:

Ցայտարարում ենք նաեւ, որ խմբագրութեան հասնե-լիք գումարները պետք է ուղարկեն պատուով պաշտօնա-կան հասցէին: Անհատների յանձնւած դրամների համար խմբագրութիւնը իրան պատասխանատու չէ համարում:

ԽՍԲԱԿՐՈՒԹԻՒՆ «ՀՆՉԱԿ»

Ս. - Դ. Հ Ե Չ Ա Կ Ե Ն Կ Ո Ր Մ Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ր Ն

Կ Ո Չ Ը

ՈՐՀՂԻՍԸ ԵՆՐՈԳԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆՆԵՐՈՆ ՆԻ ԱԶԻՆՈՐՆ

Ներկայ քաղաքական քաղաքական իրավիճակը, երբ որոշում է Օսմանեան Պետութեան քաղաքական և երբ, ի թիւս այլոց, եւրոպական դիպլոմատիայի առաջ է դրւած հանել Հայկական հեղինակ, Ս. Դ. Հրե-յակեան կուսակցութիւնը իր պարտք համարեց իր ձայնը բարձրագոյն եւրոպական ժողովուրդների և պետութիւնների առաջ, ներկայացնելով հայ ժողովուրդի վիճակը, նրա դասը և նրա պահանջները յառեւ կոչով: Այդ կոչը լայն է տեսած ժողովուրդներ և հայերէն լեզուներով:

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն

ՀԱՅԿԵՐԵՆԵՐ

Հնդուած լինելով, վերջին տարիներս Բանիցս ինձ ուղղւած, երաւեր՝ նորից անցնել Ս. - Դ. Հնչակեան կու-սակցութեան ասպարէզը, եւ այդ առիթով օտար հակաբար ստանում իմ օնորհաւորական նամակներ ու հեռագրեր բազմաթիւ ընկերների և Մասնաճիւղերի կողմից: Եւ ինձ բոլի եմ օգտի «Հնչակ»-ի էջերում հրապարակով յայտնել միաժամանակ ամենից իմ սրտագին օնորհակալութիւն-ները: Ձեր անհնգել, համեմատել ու եւանդուն գործու-նեութեան մէջ է կայանում մեր կարողութիւնը. բոլի անըս-պառ լինի առաջինը՝ եւ մենք այդ առաջարկով աղբիւրից միտք կը բաղենք մեզ ոյժ հոգնակա անսպառ՝ ձեզ հետ միա-սին առաջ մղելու համար և իրական ու մեծ աշխատութիւնը:

Կեցցե՛ք՝ Միջազգային Սօցիալիզմ. կեցցե՛ք՝ Սօցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւն:

Ա. ՆԱԶԱՐԵԿ

ԵՆՐՈԳԱՆ ԵՒ ԹԻՒՐԻՒՆ

Այս բաղէիս ծի խիստ վտանգաւոր խաղ է խաղում նոյն իր գլխին ամեն կողմնացոյց կորցրած թիւրք կառավարու-թիւնը: Երբ վաղեմի սովորութեան համաձայն՝ միշտ փնտռելով և առաջ բերելով պատրասկներ, նա ճիւղ է թափում երկարել խաղաղութեան բանակցութիւնների վերջին ժամը: Զայլամի պէս նա թաղցնում է իր գլխին աւաղում, որպէսզի չը տեսնէ իր վրայ յարձակող թշնամիին: Նա չէ ուզում, և կամ ան-կար է յայտնուում, սակայն բանական քաղաքացիական արիւն-թիւն բաց աչքով նայելու, որ թիւրքիա եւրոպայում այլ ևս չը կայ և չէ կարող լինել: Ստակալի իրողութիւն, հարկու- և եթէ թիւրքն ունենար բանական ինքնագիտակցութիւն, եթէ նա չը լինէր ինքն իր ֆատալիզմի զսլը, նա կարող կը հան-գիտանար իրան պարզ հաշիւ տալ իր շուրջը կուտակւած ներ-կայ ահաւոր իրականութեան մասին: Բայց, ինքն իրան օրօ-բելով, իսկապէս այլ ևս օլը ցնդած, երազներով, նա կարծում է, նա յոյս է տածում, որ եւրոպական ձեռք պետութիւնների ներկայ համաձայն գործակցութիւնն այսօր վաղը կը քայքայէ, և, թիւրքական մի թերթի խօսքով՝ վերջում յայտնի առակից, «Հնչակ» նման նրանք կը սկսեն բղկուել կտոր ոտկորի վրայ» և ... այդ սակորը, մի հրաշքով, նորից կը ծածկէ մտով թիւր-քական հինաւորւոյ քաղաքականութիւն, որ շատ անգամ պը-սակել է համեմատական աշողութեամբ: Բայց թիւրքիան մտածում է, որ նրա եւրոպական գոյութիւնն այլ ևս կա-տարեալ կմախք է և որ ձեռք պետութիւնների համաձայնութիւնը տեղական լինի կամ ոչ՝ երկու դէպքումն էլ եւրոպական թիւրքիայի ճակատագիրը պետք է նկատել այլ ևս հասած իր բոլորման վախճանին:

Միւս կողմից՝ Եւրոպան էլ վտանգաւոր խաղ է խաղում իր գլխին և իրա հետ՝ ամբողջ քաղաքակրթութեան գլխին: Նրա խաղը, սակայն, անգիտակցական չէ: Նա գիտէ, որ կանգ-նած է մի հակադասական խաղի վրայ, որն ամեն բաղ-սպառնում է բռնկել: Նա գիտէ, որ այդ բռնկումը կը յայտ-նուէ մէկ ահռելի համաեւրոպական պատերազմ, որի մէջ յաղթողը յաղթածից չի տարբերուի, որովհետեւ, վերջին հաշ-ւով, տուժողը կը լինի ամբողջ եւրոպան, քաղաքակրթութիւնը, մարդկութիւնը: Նա գիտէ, որ այդ դէպքում ո՛չ մի եւրո-պական պետութեան ո՛չ ծարաւը և ո՛չ քաղցը չի յազենայ, որովհետեւ իւրաքանչիւրի ֆինանսական, հողատիրական, տն-տեսական արտոթափն անյազուրկ է, որովհետեւ իւրաքանչիւրի կապիտալիստական դիտումներն անաւհման են, որովհետեւ իւրաքանչիւրը, կրանելով փոքր կամ տկար ազգերին՝ նրանց երկիրներով, ի վերջոյ միմեանց էլ պատուա-պատու կանեն և մարդատանութեան ու հանրային թշուառութեան սարսա-փելի հեկատոմբներից կաղնւած պատանդանի վրայ իրանք իսկ կը յայտնեն ուժասպառ, քայքայւած ու ջախջախւած ուրաւականներ նախկին ճեմութեան: Եւրոպան այդ գիտէ, և դա՛ է պատճառը նրա երկիւղի ամեն պատերազմից, դա՛ է գաղափրը խաղաղութիւնը պահպանելու ջանքերի: Նա գիտէ այդ՝ Այո՛, բայց այդ ջանքերն աշողութեամբ պատկերւ համար արդեօք նպատակաւորմար է՞ն եւրոպական ճեմ պետութիւն-ների այսօր բռնած ընթացքն ու զիրքը մասնաւորապէս բալ-կանեան պատերազմի և առհասարակ ամբողջ Արեւելեան Հարցի նկատմամբ, այլ խօսքով, ամբողջ եւրոպական ու ամբողջ թիւրքիայի նկատմամբ: Մենք կարծում ենք — ո՛չ:

Դեպի քաղաքական երկտարադ ազգերը եւրոպայի բոլ-նած քաղաքականութիւնն իրանց դեպքանաժողովում ներկա-յանում է երկդիմի: Մի կողմից եւեթակ համաձայնութիւնը նրանց նեցուկ է իր համակրութեամբ, իսկ միւս կողմից՝ եւ-

եակ Դաշնակցութիւնը ընդունել է մերթ վարանող, մերթ հաւ-
կառակ իսկ դիրք զէպի նրանց: Աւստրիան զէնքի տակ է
գումարել իր զօրքերը, յատկապէս Սերբիայի դէմ, և շտապում
է ստեղծել մէկ «ազատ և մեծ» Ալբանիա՝ աւելի ուշ իր
ձեռքի տակ գցելու գաղանի յուսով: Իտալիան իր լարերն
է ուղղում մասնաւորապէս Յունաստանի դէմ, հակառակելով
վերջինիս գրաւած յունական կղզիների միացման իրանց մայր
երկրի հետ, և այլախառն ստեղծում է մի շարք խնդիրներ՝
նման Կրէտէի: Դերմանիան, որ Թիւրքիայի անկումով մեծ
հարւած ստացաւ իր արևելեան ֆինանսական ու անուսա-
կան քաղաքականութեան մէջ, թիկունք է իր դաշնակիցներին:
Եւ Եռեակ Դաշնակցութեան քաղաքականութիւնը հանդիսա-
նում է մի կողմից սպառնալից եւրոպայի խաղաղութեան
համար և միւս կողմից՝ պղտորիչ և արգելաւիթ բաղկանեան
ազգերի և Թիւրքիայի մէջ եղած խաղաղութեան բանակցու-
թիւնների բնական ընթացքի ու ելքի: Թիւրքիան քաջաբե-
ւած մեծ պետութիւնների քաղաքականութեան այդ աններ-
դաշնակութեամբ, սկսել է թէ՛ ձգձգել և թէ՛ սուր ու միայն
կիսազիջողական ուղղութիւն տալ իր բանակցութիւններին
բաղկանեան չորս տէրութիւնների հետ: Մթնոլորտը միան-
գամից թանձրանալով մառախուղի մէջ երևան են եկել Ռու-
սոսիայի պահանջները Բոլշարիայից՝ ուսհանադձերի տուի-
թով: Եւ միայն մի կէտում, մինչև այսօր, մեծ պետութիւն-
ները կարողացան պահպանել իրանց «համերաշխ» դիրքերը:—
ընդհանուր պատերազմի երկիւղը, մի կողմից և միւս կողմից՝
ջանքեր արգելք լինել բաղկանեան պատերազմի վերսկսման:
Բայց տևողական կը լինի արդեօք զէթ այդ համերաշխու-
թիւնը... Նրանց հակաշահութեան և քաղաքական գաղանի
նկրտումների այդ խճճանքը վաղան օրւայ համար թերևս
պատրաստում է շատ անակնկալներ՝ սպառնալից ընդհանուր
խաղաղութեան Ռուսաստանը, մինչև այժմ պահած լինելով
համարաւոր դիրք ու կերպարանք, կարող է շարժման ձգտու-
մներ ցոյց տալ այդ վաղան օրը, և այդ նոր քաղաքականու-
թեան օղակի մէջ գցել իր երկու ձայնակից պետութիւններին՝
Անգլիային ու Փրանսիային: Պատրւակներ դրա համար ծա-
ղում են ամեն օր Աւստրիայի ընթացքի շնորհով, և վաղն
ամենամեծ պատրաստ կը յայտնէ աւելի ուժգնութեամբ,
եթէ բաղկանեան պատերազմը վերսկսւելու հանգամանք կրէ:

Դա՛ է եւրոպայի դիրքն այսօր զէպի բաղկանեան խն-
դիրը: Յամենայն դէպս, այս կամ այն եղանակով, որոշւած
պիտի համարել եւրոպական Թիւրքիայի ճակատագիրը: Մեծ
պետութիւնների քաղաքականութիւնն այդ նկատմամբ ներ-
կայացնում է յայտնի ներդաշնակութիւն: Որոշ պատկանում
է այլ ևս ամենքին: Խնդիրը դիւստրապէս նրանումն է, թէ
ո՞ր մէկին ի՞նչ բաժին է հասնելու:

Բայց միւս կողմ մտնում է ասիական Թիւրքիայի բախար
և դրա հետ կապւած խնդիրները — Լիբանանի, Սիրիայի,
Երաբիայի, Հայաստանի խնդիրները: Որոշելով եւրոպական
Թիւրքիայի ճակատագիրը, այսօր մեծ պետութիւններն ա-
ռանձին պատրաստակամութիւն չեն ցոյց տալիս այդ վերո-
յիշեալ խնդիրների ճշտապահ հնոցը շիջանելու: Քաղաքա-
կանութիւն երկիւղի, քաղաքականութիւն օր օրի վրայ, քա-
ղաքականութիւն խարխալման — Թիւրքիայի վերաբերու-
թեամբ այդ է եղել եւրոպայի միշտ, որպէս և այսօր: Նա
ամեն անգամ, խառապելով ընդհանուր մի լուծումից, մասնակի
կերպով է վճռել Թիւրքիայի շուրջը գումարւած հարցերը:
Յետաձգման ու երկարաձգման այդ քաղաքականութիւնը եր-
բէք չէ ծառայել ի նպաստ եւրոպայի — սրա գլխին ճշտական
կերպով կուտակւած են եղել Թիւրքական փոթորիկները: Այսօր
կրկնւում է միևնոյն երևոյթը. — նա ձգտում է խլացնել
Փոքր Ասիայի խնդիրները, ի թիւս միւսների նաև հայկականը,
որ ամենահրատապն է: Հենց ընդհանուր խաղաղութեան տե-
սակէտից մենք գտնում ենք, որ այդ ընթացքը յղի է սոսկալի

ոխանելով: Փոքր Ասիայի Թիւրքահայտան ժողովրդները
կրկին և կրկին խաբելով իրանց ազատագրական յայտերը,
կրկին և կրկին իրանց հասցրած տեսնելով փրկութեան ջրի
տիւր և ազատ դարձեալ ծարաւ չեն մղւած ու գործած նախ-
կին դժոխային կրակում — այդ ժողովրդները չեն կարող այդ
պարագային ամեն ճիգ չը թափել և քայքայւած Թիւրքիայի
դէմ ըմբոստ ու յեղափոխական շարժումների փորձ չանել:
Այս նաև ի՞նչ երաշխաւորութիւն կայ այդ ժողովրդների.
մասնաւորապէս հայերի համար, որ այլ ևս Փոքր Ասիայի
խորքերը բշտած Թիւրք պետութիւնը իր կրած կորստների,
իր զոյւթեան քայքայման վրէժն ու կատաղութիւնը յագե-
ցնելու համար վաղն իսկ սարսափների սպանդանոց չի դար-
ձնել Հայաստանը և այլ վայրեր, որպէս և ասիական յոյների
բնակատեղիները: Պատահելով եւրոպական Թիւրքիան և եւ-
րոպայից սրան վաճառելով ու գահավիժելով մինչև Փոքր Ա-
սիան, մեծ պետութիւններն ահաբեկ աղէտների հեղինակ են
յայտնւելու մօտ ապագային: Եւ այդ դէպքում եւրոպայի ու-
րերի տակ, մեծութեան փառքի պատուանդանի փոխարէն,
դարձեալ կանգնած կը լինի Խորոյիլի պատանդան, որ կը
բոցալսուէ և կը հրդեհէ ամեն կայծից: Եւ դա՛ հենց
վաղը, երբ հաղիւ աւարտած կը լինեն մեծ պետութիւններն
իրանց հաշիւները եւրոպական Թիւրքիայի հետ: Եւ սակայն
կայ միայն մի միջոց այդ մօտալուտ սպառնալիքը նա-
խազգուշացնելու: Հենց այսօր, երբ որոշւում է եւրո-
պական Թիւրքիայի ճակատագիրը, նրանք պէտք է միանգա-
մայն կանոնաւորեն նաև ասիական Թիւրքիայի դրութիւնը:
Եւ դա կարող է լինել միմիայն հետեւեալ կերպով. — վերա-
կադել՝ ա Ր մ ա տ ա կ ա ն բ ա Ր ե ն ո Ր ո Վ ո Վ մ ե Ր ո Վ
ամբողջ Փոքր Ասիան՝ համաձայն այնուեղ բնակող ժողովրդ-
ների հիմնական ու տեղական պահանջների, որով և նոյն
Թիւրք ժողովրդի եւ երբ կհոսանան... այդ մէջ...
համաձայն մեծ պետութիւնների իսկ շահերի, այն ժամանակ,
միանգամից ընդմիջտ վերացւած կը լինի Արեւելեան Հարցն
իր պարբերական սարսափելի սպառնալիքներով ընդդէմ եւ-
րոպայի խաղաղութեան: Եւ երա՞յ ամենք արդեօք այն, որ
այդպէս յեղաշրջւած ու բարեփոխւած Փոքր Ասիան վաղը
կարող է լինել իր բոլոր ժողովրդների սերտ դաշնակցութեան
օրորանք, յանուն լիակողմանի առաջադիմութեան ու զար-
գացման, և որ այդ փոքր-ասիական դաշնակցութիւնը մէկ
օր կարող կը լինի Մարմարայի և Էգէյեան Մովի գլխով
ռամկավարական դաշինքի ձեռք մեկնել բաղկանեան ժողո-
վրդների դաշնակցութեան, որուն ցանկանում ենք յարտուե
գոյութիւն...

Ներկայացնելով եւրոպական քաղաքականութեան այսօր-
ւան դրութիւնը, մենք ունենք նպատակ ցոյց տալու, որ հայ-
կական խնդիրը նորից գտնւում է մէկ անել վիճակում, —
նրան սպառնում է այս անգամ ևս միայն անլուծելի: Պէտք
կա՞յ ասելու, թէ այդ հանգամանքը որպիսի արհուրալի էջեր
է նորից արձանագրելու հայութեան պատմութեան մէջ: Պէտք
կա՞յ ասելու, թէ այդ հանգամանքը որպիսի մթութեան մէջ
է գլորելու, և կամ որպիսի օրհասական անակնկալների է
ենթարկւելու, Թիւրքահայ ժողովրդի բախար: Պէտք կա՞յ ա-
սելու նաև, որ այդ հանգամանքը, որը պիտի նկատուի ներ-
կայումս իբրեւ եղբրական, մի մեծ, մի սուր պարտականութիւն
է դնում այսօր, ներկայ պատմական մօճէնով համար, բոլոր
հայ յեղափոխականների վրայ. — համերաշխ գործակցութիւն,
մէկ ընդհանուր ընթացքով, ամեն հնարաւոր ու նպատակա-
յարմար միջոցներով, առաջ դնելու համար հայկական հարցը՝
եւրոպայի կողմից նրա անմիջական լուծման պահանջով, ու-
նենալով իբրեւ հիմք Թիւրքահայ ազատագրութեան ճշակւած
ու կազմւած գործնական Մրազիր: Նախազգուշացնում ենք,
պատրաստ լինենք՝ զիմադրուելու համար ամեն հանգամանք
և ծառայեցնելու այն հայ ժողովրդի դատի աջողութեան:

